

*ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ*



*ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ*

*ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՅՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ*

*ԵՐԵՎԱՆ 2021*

Ուղեցույցը հրատարակվել է  
Ավանդական բժշկության համալսարանի  
գիտական խորհրդի երաշխավորությամբ

Մեթոդական ուղեցույցի նպատակն է ուսանողներին ծանոթացնել **Ավանդական բժշկության համալսարանի** պատմությանը, կառուցվածքին, ուսումնառության կանոններին, ուսանողների իրավունքներին և պարտականություններին, գիտամանկավարժական գործընթացի կազմակերպմանը, ներհամալսարանային կառույցներին և նրանց գործունեությանը:

Ուղեցույցում ներկայացված են նաև ուսումնական գործընթացներին (դասախոսություններ, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքներ), քննություններին և ստուգարքներին պատրաստվելու, ինքնուրույն և անհատական աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները:

Ուղեցույցը կօգնի ուսանողին պաշտպանել իր իրավունքներն ու իրականացնել պարտականությունները, ճիշտ կողմնորոշվել ԱԲՀ-ի ուսումնական գործընթացում, ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման առանձնահատկություններին, գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացի բովանդակությանը:


Մեթոդական ուղեցույցը նախատեսված է Համալսարանի բոլոր ուսանողների համար:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ռեկտորի ուղերձը	4
Համալսարանի առաքելությունը	5
Պատմական համառոտ ակնարկ	5
Համալսարանի կառավարման համակարգը	7
Համալսարանի կառուցվածքը	8
Ֆակուլտետներն ու մասնագիտությունները	9
Գրադարան	11
Ուսանողական կառույցներ	12
Կուրսի ավագի պարտականությունները	14
Ուսումնական խորհրդատուներ	14
Ուսումնական գործընթացի կազմակերպում	15
Քննաշրջանի նախապատրաստական աշխատանքներ	18
Կրեդիտային համակարգ. ընդհանուր նկարագիրը	19
Կրեդիտային համակարգի հիմնադրույթները	21
Կրեդիտային համակարգի հիմնական նորմերը ՀՀ բուհական համակարգում	22
Ուսանողակենտրոն ուսուցում, դասավանդում և գնահատում	24
Ուսանողների ներգրավվածությունը կրթության որակի ներքին ապահովման գործընթացներում	25
Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը ԱԲՀ-ում	26
Ուսումնասիրտադրական պրակտիկա	30
Պրակտիկայի պորտֆոլիո	31
ԱԲՀ-ի ներքին կարգապահական կանոններ	32
ԱԲՀ-ի ուսանողների խրախուսման և ուսման վճարի մասնակի փոխհատուցման (զեղչերի) տրամադրման կանոնակարգ	35
ԱԲՀ-ի ուսանողների հեռացման /ազատման/ և վերականգնման կարգ	37
ԱԲՀ-ի ակադեմիական ազնվության կանոնակարգ	41

## *ՌԵԿՏՈՐԻ ՈՒՂԵՐՁԸ*

### **Միրելի՛ ուսանող,**



Մասնագիտական գիտելիքներով հարուստ, բանիմաց, հմուտ մասնագետը պետության ամենաարժեքավոր հարստությունն է:

Գիտակից և կիրթ սերնդով է պայմանավորված յուրաքանչյուր պետության տեղն ու դերը համաշխարհային արագընթաց զարգացումներում:

Արդի դարաշրջանը նոր պահանջներ է ներկայացնում մասնագիտական կրթությանը: Այժմ բավարար չէ լինել պարզապես մասնագետ. կրթական ոլորտում իրականացվող բոլոր գործընթացները միտված են մրցունակ և որակյալ մասնագետների պատրաստմանը:

Որակյալ կրթությունը, բարձրակարգ մասնագետ լինելը ժամանակի հրամայականն է, ուստի օրըստօրե փոփոխվող համաշխարհային մարտահրավերներին կարող են դիմագրավել միայն արդիական, կայուն, հարուստ գիտելիքներով:

Ավանդական բժշկության համալսարանը բարձր հեղինակություն է վայելում Հայաստանի կրթական համակարգում:

2021 թվականի հունվարի 15-ին «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի կողմից ԱԲՀ-ին շնորհվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում:

Առաջնորդվելով իր որդեգրած սկզբունքով, այն է՝ անզիջում լինել չառաջադիմող ուսանողների նկատմամբ և պատրաստել միայն գրագետ ու բանիմաց, որակյալ մասնագետներ, մեր բուհը դարձել է ուսուցման այլընտրանքային դարբնոց, որի շրջանավարտներն իրենց մակարդակով մրցակից են պրակտիկ և տեսական բժշկության ասպարեզում:

Ուսանողները մեր համալսարան ոտք են դնում նոր գիտելիքներ ձեռք բերելու և լավ մասնագետ դառնալու հավակնությամբ:

Ցանկանում եմ վստահեցնել, որ բուհի ղեկավարությունն անելու է ամեն ինչ, որպեսզի ձեր ուսումնառության տարիները լինեն բովանդակալից և հետաքրքիր:

Ուստի, սա է մեր հորդորը բոլոր ուսանողներին, օգտագործեք ձեր լավագույն տարիները՝ որակյալ կրթություն ստանալու, բարձրակարգ մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու համար:

**Ռեկտոր՝ կ.գ.թ., Նորիկ Խորենի Սարիբեկյան**

## **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ**

Ավանդական բժշկության համալսարանը առաջատար բժշկական բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի գործունեությունը նպատակաուղղված է բժշկական կրթության, բժշկագիտության և առողջապահության ոլորտի ազգային և միջազգային աշխատաշուկայի համար բանիմաց, բարձր բարոյականությամբ օժտված, բժիշկ-հիվանդ հարաբերության մեջ իրենց դերը գիտակցող նոր որակի բժիշկների պատրաստմանը, որոնք իրենց պրակտիկ գործունեության ընթացքում ունակ կլինեն ինտեգրել ժամանակակից և գիտականորեն հիմնավորված ավանդական բժշկության ախտորոշման և բուժման մեթոդները:

## **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ**

Ավանդական բժշկության համալսարանը (այսուհետև՝ Համալսարան կամ ԱԲՀ) ձգտում է դառնալ ազգային և միջազգային բարձրագույն ուսումնական հաստատություն, որն՝

- ✚ Ձգտում է զարգացնել իր գերակա ուղղությունները և մրցակցային առավելությունները՝ ինտեգրել գիտականորեն հիմնավորված ավանդական բժշկության և ժամանակակից բժշկության առանձնահատուկ մոտեցումները, դրանք ներդնելով կրթական գործունեությունում, ապահովելով գիտելիքների փոխանցումը տարբեր շահակիցներին:
- ✚ Առաջարկում է եվրոպական բժշկական բարձրագույն կրթական տարածքի հիմնարար սկզբունքներին համապատասխան կրթական, գիտական, հետազոտական մրցունակ բժշկական ծրագրեր:
- ✚ Կլինի հասանելի, մատչելի և նախընտրելի բարձրագույն ուսումնական հաստատություն հասարակության ամենատարբեր շերտերի համար, անկախ տարիքից, սեռից, ռասայական ու ազգային պատկանելությունից, համոզմունքներից և քաղաքական նախասիրություններից:
- ✚ Ունի գործուն, արդյունավետ կառավարում ու վարչարարություն, անհրաժեշտ ենթակառուցվածքներ, ժամանակակից տեխնոլոգիաներ, ուսումնական և լաբորատոր բազա, որը նպաստում է կրթության որակի անընդհատ ու շարունակական բարելավմանը,
- ✚ Կրթությունը և գիտական հետազոտությունը խթանելու համար, սեփական հնարավորությունների ներդրմամբ ունակ կլինի իրականացնելու զարգացման համակարգված ռազմավարություն:

## **ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ**

«Ավանդական բժշկության համալսարան» առևտրային կազմակերպությունը (այսուհետև ԱԿ) հանդիսանում է «Ավանդական բժշկության ինստիտուտ» ԱԿ-ի իրավահաջորդը, որը հիմնադրվել է 1991 թվականին:

Համալսարանը ՀՀ ԿԳՆ կողմից հավատարմագրվել է 2001թ.-ին: Համալսարանն առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որի գործունեությունը նպատակաուղղված է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով նախատեսված բժշկական բարձրագույն, իսկ 2011թ.-ից նաև բժշկական միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացմանը:

ԱԲՀ-ն գործում է իր սեփական, վերանորոգված, հարմարավետ ուսումնական շենքում: Համալսարանն իր առանձնահատկությամբ եզակի է տարածաշրջանում, որի

գործունեությունը նպատակաուղղված է նոր որակի բժշկ-մասնագետների պատրաստմանը, բժշկներ, որոնք 21-րդ դարի բժշկությունը կզարգացնեն ժամանակակից և ավանդական բժշկությունների ինտեգրման ուղիով:

Իր գործունեության ընթացքում Համալսարանը պատրաստել է 1000-ից ավելի շրջանավարտներ, որոնց մեծամասնությունը որպես պրակտիկ բժիշկ, գիտական աշխատող, դասախոս, առողջապահության կազմակերպիչ հաջողությամբ աշխատում են ոչ միայն մեր հանրապետության, այլ նաև արտերկրների հետևյալ առաջնակարգ կլինիկաներում և բժշկագիտական ամբիոններում՝ ՌԴ-ի Մոսկվայի Կրեմլյան կենտրոնական հիվանդանոց, Մոսկվայի կենտրոնական թիվ 51 կլինիկական հիվանդանոց, Մեչենովի անվան բժշկական ակադեմիա, Բակուլևի անվան սիրտ-անոթային վիրաբուժության գիտական կենտրոն, Սանկտ-Պետերբուրգի Ի. Պավլովի անվան պետական բժշկական համալսարանի վիրաբուժության ամբիոն, ինչպես նաև Բելգիայի, Գերմանիայի, Բուլղարիայի, ԱՄՆ-ի, Վրաստանի, Նորվեգիայի, Հնդկաստանի, Իրաքի, Պարսկաստանի, Ուկրաինայի, Իսպանիայի, Հունաստանի կլինիկաներում և այլուր:

Այսօր հանրապետության առողջապահության համակարգը համալրել են մեր բուհի շրջանավարտները, որոնք ոչ միայն բարձր վարկանիշ ունեցող մասնագետներ են, այլ նաև բժշկական գործի կազմակերպիչներ: Շրջանավարտներից շատերն ունեն իրենց մասնավոր կլինիկաները, դեռ ավելին, որպես գործատու աշխատելու նպատակով իրենց մոտ են հրավիրում մեր շրջանավարտներին:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը համալրված է մանկավարժական, մասնագիտական բազմամյա փորձառություն ունեցող, հանրապետությունում և նրա շրջանակներից դուրս ճանաչված գիտնականներով, դասախոսներով, բժիշկներով, որոնց աշխատանքի շնորհիվ ԱԲՀ-ն այսօր ունի մեծ հեղինակություն և իր արժանի տեղն է զբաղեցրել հանրապետության բուհական համակարգում:

Համալսարանում գործում են 2 ֆակուլտետ, 8 ամբիոն: Ներկայումս բուհում ուսանում է 322 ուսանող, այդ թվում տեղացի, սփյուռքահայ և օտարերկրացի ուսանողներ:

Համալսարանը համագործակցում է հանրապետության և օտարերկրյա հաստատությունների ու կազմակերպությունների հետ:

Անցած 30 տարիների ընթացքում համալսարանի ղեկավարությունը, վարչական և պրոֆեսորադասախոսական կազմը, ամբողջ կոլեկտիվը հետևողականորեն ձգտել են իրականացնել միջազգային չափանիշներին համապատասխանող ուսումնագիտական գործընթաց:

Համալսարանն իր գերակա խնդիրն է համարում կրթության որակի բարձրացումը, աշխատաշուկայի պահանջարկի բավարարումը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրվելու հնարավորության մեծացումը:

## **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

1. ԱԲՀ-ի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը և համալսարանի կանոնադրությանը համապատասխան, ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ, ռեկտորի և գիտական խորհրդի գործառույթների իրականացմամբ, ինչպես նաև կարևորագույն հարցերի լուծման դեպքում համալսարանի կոլեկտիվի մասնակցությամբ:
2. **ԱԲՀ կառավարման բարձրագույն մարմինը հիմնադիր անդամների ընդհանուր ժողովն է**, որն ունի համալսարանի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Հիմնադիր անդամների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություններն ամրագրված են համալսարանի կանոնադրությունում:
3. **Համալսարանի գիտական խորհուրդը** համալսարանի ռեկտորի նախագահությամբ գործող մարմին է, որը լուծում է համալսարանի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հիմնահարցերը: ԱԲՀ-ի գիտական խորհրդի կազմում ընդգրկված են ամբիոնի վարիչներ, ստորաբաժանումների ղեկավարներ, ինչպես նաև ուսանողներ: Գիտական խորհրդի անդամների ընդհանուր թիվը չի գերազանցում 21-ը: Գիտական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ:
4. **Համալսարանի ռեկտորը** գործում է իր իրավասությունների սահմաններում, ԱԲՀ կանոնադրության համաձայն և ամբողջական պատասխանատվություն է կրում բուհի իրականացրած աշխատանքների արդյունքների համար: Ռեկտորն իրականացնում է բուհի ընթացիկ գործունեության ղեկավարումը և գործում է իր ղեկավարած բուհի անունից միանձնյա՝ առանց լիազորագրի: Ռեկտոր նշանակվում է հիմնադիր անդամների ընդհանուր ժողովում և հաշվետու է համալսարանի հիմնադիր անդամների ընդհանուր ժողովին: Համալսարանի ընթացիկ, ուսումնական և գիտամանկավարժական գործունեության հիմնական հարցերը քննարկվում են ռեկտորի խորհրդում:
5. **ԱԲՀ-ի ռեկտորատը** համալսարանի ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որը գործում է իր կանոնակարգով սահմանված լիազորությունների սահմաններում, քննարկում է Համալսարանի գործունեությանը վերաբերող հարցեր: Ռեկտորատի կազմում ընդգրկված են Համալսարանի ռեկտորը, պրոռեկտորները, գլխավոր հաշվապահը, գիտական մասի վարիչը, դեկանը, կրթական ծրագրերի ղեկավարը, ուսումնական մասի վարիչը, արտաքին կապերի բաժնի ղեկավարը, ընդհանուր բաժնի վարիչը, ամբիոնի վարիչները:



## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համալսարանի կազմակերպական կառուցվածքում ընդգրկված են՝ կառավարման խորհուրդը, գիտական խորհուրդը, ռեկտորատը, ուսումնական մասը, ֆակուլտետները, ամբիոնները, ՄՌԿ և ընդհանուր բաժինը, գիտական մասը, արտաքին կապերի բաժինը, հաշվապահությունը, գիտաբժշկական ուսումնական կենտրոնը (ԳԲՈՒԿ), գրադարանը և տնտեսական մասը:

Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանվում են Համալսարանի կանոնադրությամբ և իրենց գործունեությունը կարգավորող իրավանորմատիվային փաստաթղթերով:

Համալսարանի գծային կառուցվածքին կարող էք ծանոթանալ Համալսարանի [www.utm.am](http://www.utm.am) պաշտոնական կայքում:

Համալսարանն իր կազմի մեջ մտնող բոլոր ստորաբաժանումների հետ միասին ուսումնական, գիտական և արտադրական ամբողջություն է, որի միասնությունն ապահովվում է ուսումնական, կրթական և գիտահետազոտական գործընթացների կազմակերպմանը նրա բոլոր ստորաբաժանումների պարտադիր մասնակցությամբ:

### «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» ֆակուլտետներ

- Դեկանատ՝ 3-րդ հարկ
- Ռեկտորատ՝ 3-րդ հարկ
- Ուսումնական մաս՝ 3-րդ հարկ
- Գրադարան՝ 3-րդ հարկ
- Արտաքին կապեր՝ 3-րդ հարկ
- Ուսանողական խորհուրդ՝ 4-րդ հարկ
- Գիտական մաս՝ 4-րդ հարկ
- ՄՌԿ և ընդհանուր բաժին՝ 3-րդ հարկ
- Հաշվապահություն՝ 3-րդ հարկ
- Դահլիճ՝ 3-րդ հարկ
- ԳԲՈՒԿ՝ 1-ին հարկ
- Բուֆետ՝ 1-ին հարկ



### Կոնտակտային տվյալներ

Հեռ.՝ + 374 (10) 616 290

Հասցեն՝ ՀՀ. ք. Երևան, Մարշալ Բարաջանյան 38 Ա  
Էլ. հասցեն՝ info@utm.am



## **ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Համալսարանն ունի 2 ֆակուլտետ՝ **«Բուժական»** և **«Մտնաստղագիտ»**:

Համալսարանի **«Բուժական»** ֆակուլտետը հիմնադրվել է 1991թ.՝ դեկան Ա. Կարապետյանի ղեկավարությամբ: Համալսարանը «Բուժական գործ» մասնագիտությամբ կադրեր է պատրաստում ՀՀ պետական նորմերին, ՈԱՇ-ի կրթական չափորոշիչներին և համալսարանի գիտխորհրդով հաստատված մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան: Համալսարանի «Բուժական գործ» մասնագիտությունը ՀՀ ԿԳ նախարարության կողմից հավատարմագրվել է 2001թ.: Շրջանավարտներին շնորհվում է պետական դիպլոմ:

Համալսարանն իր առանձնահատկությամբ տարբերվում է տարածաշրջանի բժշկական այլ բուհերից: Համալսարանի ուսումնական գործընթացը նպատակաուղղված է նոր որակի բժշկամասնագետների պատրաստմանը, բժիշկներ, որոնք 21-րդ դարի բժշկությունը կգարգացնեն ժամանակակից և ավանդական բժշկության ինտեգրման ուղիով:

### **Կրթական ծրագիր՝ «Բուժական գործ», դասիչ՝ 091201.00.7**

**«Բուժական գործ»** մասնագիտության ուսուցման տևողությունը 6 տարի է՝ առկա ուսուցմամբ: Համալսարանում, համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակների պայմաններում, ուսուցումը կազմակերպվել է նաև հեռավար՝ ըստ համապատասխան ընթացակարգերի:

Կրթական ծրագրի ծավալը կազմում է 360 կրեդիտ:

**«Բուժական գործ»** մասնագիտության ուսումնական պլանը ներառում է՝

- Սոցիալ-հումանիտար դասընթացների կրթամաս
- Բնագիտական և բժշկակենսաբանական դասընթացների կրթամաս
- Կանխարգելիչ բժշկության դասընթացների կրթամաս
- Ավանդական բժշկության դասընթացների կրթամաս
- Ընդհանուր և հատուկ մասնագիտական դասընթացների կրթամաս
- Ուսումնաարտադրական պրակտիկաներ

Համալսարանի առանձնահատկությունից ելնելով՝ ժամանակակից բժշկական առարկաներին զուգահեռ, ուսումնական պլանում ներառված են նաև գիտական հիմքերի վրա դրված ավանդական բժշկության դասընթացներ՝ ասեղնաբուժություն, բուսաբուժություն (ֆիտոթերապիա), հոմեոպաթիա, մանուալ թերապիա, ֆարմակոգնոզիա, իրիդոդիագնոստիկա, դեղաբույսերի մորֆոլոգիա:

Ծրագիրն ավարտվում է ամփոփիչ ավարտական ատեստավորումներով:

Ուսուցումը կազմակերպվում է համալսարանի թիվ 1 մասնաշենքում, համալսարանի գիտաբժշկական ուսումնական կենտրոնում, ինչպես նաև Երևան քաղաքի առաջնակարգ կլինիկաներում, որտեղ անցկացվում են նաև ուսումնաարտադրական պրակտիկաները:

**«Բուժական գործ»** մասնագիտության կրթական ծրագիրը յուրացրած շրջանավարտը կարող է զբաղվել՝

- բժշկական,
- կազմակերպչական-կառավարման,
- գիտահետազոտական գործունեությամբ:

Բուժական ֆակուլտետի շրջանավարտը կրթությունը կարող է շարունակել կլինիկական օրդինատուրայում և ասպիրանտուրայում:

Ֆակուլտետն առ այսօր ունեցել է 600-ից ավելի շրջանավարտներ, որոնց զգալի մասը, որպես պրակտիկ բժիշկ, դասախոս, գիտաշխատող, առողջապահության կազմակերպիչ աշխատում են ոչ միայն հայաստանյան, այլև արտերկրի առաջնակարգ կլինիկաներում: Շուրջ երկու տասնամյակ է, ինչ բուժական ֆակուլտետը տալիս է շրջանավարտներ, որոնք տիրապետում են ինչպես ժամանակակից, այնպես էլ ավանդական բժշկության ախտորոշման և բուժման մեթոդներին, և որոնք իրենց պրակտիկ գործունեության ընթացքում ինտեգրում են իրենց ստացած գիտելիքները:

Բուժական ֆակուլտետն ավարտած շուրջ 15 շրջանավարտ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել գիտական աստիճան:

Բուժական ֆակուլտետում սովորում են նաև օտարերկրյա ուսանողներ:

Բժշկական կադրերի պատրաստման համար համալսարանն ապահովված է պրոֆեսորադասախոսական որակյալ կադրերով:

ԱԲՀ-ն ունի նյութատեխնիկական հարուստ քազա, որն ապահովում է ուսանողների առարկայական, լաբորատոր, գործնական, գիտահետազոտական աշխատանքների իրականացումը: Ֆակուլտետի յուրաքանչյուր ուսանող օգտվում է գրադարանի թե՛ գրքային և թե՛ էլեկտրոնային շտեմարաններից, ընթերցասրահից:

Համալսարանի «Ստոմատոլոգիական» ֆակուլտետը հիմնադրվել է՝ 1996թ. դեկան հ.գ.թ., դոցենտ Կ. Վարդանյանի ղեկավարությամբ: Համալսարանը «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ կադրեր է պատրաստում ՀՀ պետական նորմերին, ՈԱՇ-ի կրթական չափորոշիչներին և համալսարանի գիտխորհրդով հաստատված մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան: Համալսարանի «Ստոմատոլոգիա» մասնագիտությունը ՀՀ ԿԳ նախարարության կողմից հավատարմագրվել է 2001թ.: Շրջանավարտներին շնորհվում է պետական դիպլոմ:

Համալսարանն իր առանձնահատկությամբ տարբերվում է տարածաշրջանի բժշկական այլ բուհերից: Համալսարանի ուսումնական գործընթացը նպատակաուղղված է նոր որակի ստոմատոլոգների պատրաստմանը:

#### **Կրթական ծրագիր՝ «Ստոմատոլոգիա», դասիչ՝ 091101.00.7**

«Ստոմատոլոգիա» մասնագիտության ուսուցման տևողությունը 5 տարի է՝ առկա ուսուցմամբ: Համալսարանում, համավարակի հետ կապված արտակարգ իրավիճակների պայմաններում, ուսուցումը կազմակերպվել է նաև հեռավար՝ ըստ համապատասխան ընթացակարգերի:

Կրթական ծրագրի ծավալը կազմում է 300 կրեդիտ:

«Ստոմատոլոգիա» մասնագիտության ուսումնական պլանը ներառում է՝

- Սոցիալ-հումանիտար դասընթացների կրթամաս
- Բնագիտական և բժշկակենսաբանական դասընթացների կրթամաս
- Կանխարգելիչ բժշկության դասընթացների կրթամաս
- Ավանդական բժշկության դասընթացների կրթամաս

- Ընդհանուր և հատուկ մասնագիտական դասընթացների կրթամաս
- Ուսումնաարտադրական պրակտիկաներ

Համալսարանի առանձնահատկությունից ելնելով՝ ժամանակակից բժշկական առարկաներին զուգահեռ, ուսումնական պլանում ներառված են նաև գիտական հիմքերի վրա դրված ավանդական բժշկության դասընթացներ՝ ասեղնաբուժությունը ստոմատոլոգիայում, ֆիտոթերապիան ստոմատոլոգիայում, ֆարմակոգնոզիա, իրիդոդիագնոստիկա, դեղաբույսերի մորֆոլոգիա:

Ծրագիրն ավարտվում է ամփոփիչ ավարտական ատեստավորումներով:

Ուսուցումը կազմակերպվում է համալսարանի թիվ 1 մասնաշենքում, համալսարանի գիտաբժշկական ուսումնական կենտրոնի ստոմատոլոգիական բաժնում, ինչպես նաև Երևան քաղաքի առաջնակարգ կլինիկաներում, որտեղ անցկացվում են նաև ուսումնաարտադրական պրակտիկաները:

**«Ստոմատոլոգիա»** մասնագիտության կրթական ծրագիրը յուրացրած շրջանավարտը կարող է զբաղվել՝

- բժշկական,
- կազմակերպչական-կառավարման,
- գիտահետազոտական գործունեությամբ:

Ստոմատոլոգիական ֆակուլտետի շրջանավարտը կրթությունը կարող է շարունակել կլինիկական օրդինատուրայում և ասպիրանտուրայում:

Ֆակուլտետն առ այսօր ունեցել է 300-ից ավելի շրջանավարտներ, որոնց զգալի մասը, որպես պրակտիկ բժիշկ, դասախոս, գիտաշխատող, առողջապահության կազմակերպիչ աշխատում են ոչ միայն հայաստանյան, այլև արտերկրի առաջնակարգ կլինիկաներում: Շուրջ երեք տասնամյակ է, ինչ ստոմատոլոգիական ֆակուլտետը պատրաստում է որակյալ մասնագետներ: Շրջանավարտներից շատերն ունեն իրենց մասնավոր կլինիկաները:

Ստոմատոլոգիական ֆակուլտետում սովորում են նաև օտարերկրյա ուսանողներ:

Բժշկական կադրերի պատրաստման համար համալսարանն ապահովված է պրոֆեսորադասախոսական որակյալ կադրերով:

ԱԲՀ-ն ունի նյութատեխնիկական հարուստ բազա, որն ապահովում է ուսանողների առարկայական, լաբորատոր, գործնական, գիտահետազոտական աշխատանքների իրականացումը: Ֆակուլտետի յուրաքանչյուր ուսանող օգտվում է համալսարանի գրադարանի թե՛ գրքային և թե՛ էլեկտրոնային շտեմարաններից, ընթերցասրահից:

## **ԳՐԱԴԱՐԱՆ**

Համալսարանն ունի արդիականացված գրադարան: Այն ապահովված է ընդարձակ ընթերցասրահով և անհրաժեշտ համակարգչային սարքավորումներով, որոնք ուսանողներին և պրոֆեսորադասախոսական անձնակազմին թույլ են տալիս օգտվել համալսարանի էլեկտրոնային գրքերի մասնագիտական գրապահոցներից, թվային գրադարանների տարբեր էլեկտրոնային գրքերի և ամսագրերի շտեմարաններից, որոնց լիարժեք անդամն է հանդիսանում Ավանդական բժշկության համալսարանը:

Ուսումնագիտական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար հիմնարար նշանակություն ունի հաստատության գրքային և տեղեկատվական բազան, որը կենտրոնացած է գրադարանում: Տարեցտարի գրադարանի գրքային ֆոնդը համալրվում է ժամանակակից

գրականությամբ, համապատասխան տեղեկատվական տարբեր նյութերով, որին նպաստում է անվճար ինտերնետ կապը, էլեկտրոնային ընթերցասրահի հիմնումը, էլեկտրոնային գրականության հարստացումը:

Գրադարանի գրքերի վերանայման ու թարմացման արդյունքում՝ ԱԲՀ պահոցում առկա է 5204 օրինակ ուսումնական և գիտական գիրք ու ամսագիր: Գրադարանային ֆոնդում պահանջվող մասնագիտական գրականության բացակայության դեպքում ուսանողները օգտվում են հանրապետական գիտաբժշկական գրադարանից, որի հետ Համալսարանն ունի համագործակցության պայմանագիր:

#### **Գրադարանից օգտվելու կանոնները**

- ✓ Գրադարանից օգտվելու իրավունք ունեն Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողները, ուսումնաօժանդակ աշխատակիցները:
- ✓ Ընթերցողական քարտն ընթերցողին սահմանված կարգով իրավունք է տալիս օգտվելու գրադարանի կողմից մատուցվող ծառայություններից: Այն, կախված ընթերցողի կարգավիճակից, վավեր է մինչև ուսումնառության ավարտը, իսկ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի համար քարտի ժամկետը կախված է տվյալ աշխատակցի և բուհի միջև կնքված պայմանագրի տևողությունից:
- ✓ Գրադարանի բաժանորդ դառնալու և ընթերցողական քարտ ստանալու համար պետք է գրադարան (308 սենյակ) ներկայանալ հետևյալ փաստաթղթերով՝
  - անձնագիր (ներառյալ հասցեն),
  - 1 լուսանկար 3X4 չափի,
  - ուսանողական գրքույկ:
- ✓ Գրադարանում գրանցվելիս ընթերցողը ծանոթանում է գրադարանից օգտվելու կանոններին, իր իրավունքներին և պարտականություններին, որը հաստատում է ընթերցողի անձնական քարտում իր ստորագրությամբ:
- ✓ ԱԲՀ գրադարանի ընթերցողական քարտով ընթերցողը կարող է գրքեր ու պարբերականներ վերցնել միայն իր համար:
- ✓ Արգելվում է գրադարանին պատկանող գիրքը տալ այլ անձանց:
- ✓ Ուսումնական գրականությունն ու դասագրքերը տրվում են մինչև ուսումնական տարվա ավարտը:
- ✓ Հազվագյուտ, հնատիպ, մեկ օրինակ գրականությունից, այդ թվում նաև հանրագիտարաններից, բառարաններից ու ատլասներից կարելի է օգտվել միայն ընթերցասրահում:
- ✓ Ընթերցասրահում ընթերցողը պարտավոր է պահպանել լուրջություն:
- ✓ Ընթերցասրահում արգելվում է բջջային հեռախոսից օգտվելն ու սնվելը:
- ✓ Գրականությունը հանձնելիս՝ թերությունների հայտնաբերման դեպքում ուսանողը պարտավոր է Վճարել վնասված գրքի վերականգնման արժեքի եռապատիկ չափով:
- ✓ Գիրքը կորցնելու դեպքում ուսանողը պարտավոր է փոխհատուցել գրքի (գրքերի) շուկայական արժեքի չափով, կամ վերադարձնել նույն հրատարակչության (կամ նոր հրատարակչության) այլ օրինակ:

**Էլ. հասցեն՝ [utmlibrary30@gmail.com](mailto:utmlibrary30@gmail.com)**

## **ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՅՆԵՐ**

Համալսարանի ուսանողական կառույցներն են՝ **Ուսանողական խորհուրդը (ՈւԽ)** և **Ուսանողական գիտական ընկերությունը (ՈւԳԸ)**:

**Ուսանողական խորհուրդը.** ուսանողական ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմին է: Խորհրդի լիազորությունները և գործունեության կարգը, ՀՀ օրենսդրությանը և ենթաօրենսդրական ակտերին համապատասխան, սահմանվում է Համալսարանի ղեկավար մարմինների որոշումներով և Ուսանողական խորհրդի գործող կանոնադրությամբ:

ՈւԽ-ի բարձրագույն ղեկավար մարմինը ԱԲՀ ՈւԽ-ի ընդհանուր ժողովն է, որը գումարվում է ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի սկզբին՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:

### ***Ուսանողական խորհրդի նպատակներն են՝***

- Պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,
- պահպանել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը,
- համալսարանի կառավարման համապատասխան մարմիններին ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցեր,
- աջակցել ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
- իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին,
- միավորել համալսարանի ուսանողությանը՝ նպաստելու ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և խթանելու ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական և ֆիզիկական զարգացմանը,
- կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը,
- մասնակցել ԱԲՀ տարածքում ներքին կարգապահության պահպանմանը,
- ԱԲՀ ՈւԽ-ն իր գործունեությունը ծավալում է՝ ելնելով նշված նպատակներից: Այն համագործակցում է ՀՀ-ում և արտերկրում գործող բուհական, ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր անձանց հետ՝ փոխհարաբերությունները կառուցելով պայմանագրային և համագործակցության ու փոխշահավետության հիմունքներով:
- ԱԲՀ ՈւԽ-ն համալսարանի կանոնադրության շրջանակում, սահմանված կարգով կարող է իրականացնել հրատարակչական գործունեություն, սոցիոլոգիական և այլ կարգի հետազոտություններ, իրականացնել խորհրդատվություն:

**Ուսանողական գիտական ընկերություն.** ՈւԳԸ-ի նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:

Ընկերության խնդիրներն ու գործունեության հիմնական ուղղություններն են.

- գիտական և կրթական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունների սատարում և իրականացում,
- ուսանողական գիտաժողովների, կոնֆերանսների, սեմինարների, գիտահանրամատչելի դասախոսությունների և այլ գիտական ու կրթական ուղղվածություն

ունեցող միջոցառումների կազմակերպում՝ դրանցում ընդգրկելով նաև արտահամալսարանական գիտական ներուժը,

- համալսարանական երիտասարդական գիտական ներուժի նպատակաուղղված օգտագործում և դրա մասին ինֆորմացիայի համակարգում,
- համակողմանի աջակցության ապահովում շնորհաշատ ուսանողներին,
- գիտական խմբերում և տարբեր գիտական ծրագրերում ուսանողների ընդգրկում,
- ուսանողների գիտական աշխատանքների և այլ նյութերի հրատարակում,
- այլ գիտական կենտրոնների հետ կապի հաստատում և տեղեկատվության փոխանակում:

### ***ԿՈՒՐՍԻ ԱՎԱԳԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ***

Յուրաքանչյուր կուրսում առավել կարգապահ և առաջադեմ ուսանողներից կուրսընկերները ընտրում են ավագ: Խմբի ավագն ենթարկվում է ֆակուլտետի ղեկանին, իր խմբին տեղեկատվություն է ներկայացնում նրա բոլոր կարգադրությունների ու ցուցումների մասին:

Կուրսի ավագի գործառույթներն են՝

- դասախոսի հանձնարարությամբ ուսանողների հաճախումների անհատական հաշվառումը,
- ուսանողների չներկայանալու կամ ուշանալու վերաբերյալ կուրսի խորհրդատուին տեղեկացնելը՝ նշելով ուշացման պատճառները,
- դասատախտակում կատարված փոփոխությունների մասին ուսանողներին տեղեկացնելը,
- ուսումնական պլանով նախատեսված ծրագրի խախտումով անցկացվող դասախոսությունների մասին ֆակուլտետի ղեկանին իրազեկելը:

### ***ԿՈՒՐՍԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐ***

Ուսումնական խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբային և անհատական խորհրդատվություններ՝ համաձայն համալսարանում գործող կանոնակարգի:

Համալսարանի ուսումնական խորհրդատուի գլխավոր խնդիրն է՝ ակտիվորեն մասնակցել ուսանողների շրջանում կազմակերպվող ուսումնադաստիարակչական, մասնագիտական և հասարակական աշխատանքներին, ունենալ ուսանողների հետ տարվող աշխատանքների միջոցառումների պլան, առաջադիմության և հաճախումների գրանցամատյան:

#### **Խորհրդատուն իրավունք ունի.**

1. մասնակցել կուրսերում և խմբերում կազմակերպվող արտադրական խորհրդակցություններին, մասնագիտական և հասարակական միջոցառումներին,
2. ամրապնդել կապը ամբիոնների և խմբի դասավանդող դասախոսների հետ,
3. ապահովել խմբի ուսանողների կազմակերպված մասնակցությունը քննություններին,
4. մասնակցել խմբերի ավագների ընտրությանը,
5. զբաղվել ուսանողների ընթացիկ հաճախումների և առաջադիմության հարցերով,

6. ծանոթանալ ուսանողի անձնական գործի հետ,
7. մասնակցել ուսանողին տրվող խրախուսանքներին և տույժերի քննարկմանը:

**Խորհրդատուների պարտականություններն են՝**

1. հետևել ուսանողների ուսումնադաստիարակչական, կուլտուր-կենցաղային և սոցիալական պաշտպանվածության խնդիրների լուծմանը,
2. աջակցել և հետևել ուսանողների վարձավճարի մուծման գործընթացին՝ համաձայն կնքված պայմանագրի ժամկետների,
3. օժանդակել շնորհալի ուսանողների ինքնագործունեության դրսևորմանը՝ ներգրավելով համապատասխան խմբակներում:

**Ամբողջ տեղեկատվությունը տե՛ս  
Համալսարանի պաշտոնական կայքում տեղադրված  
«ԱԲՀ-ի խորհրդատուների գործունեության կանոնակարգ»-ում:**

***ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ***

- ✚ Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին, բաղկացած է երկու կիսամյակներից և ավարտվում է՝ համաձայն ուսումնական պլանի:
- ✚ Դասացուցակը հաստատվում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից և դասերն սկսվելուց առնվազն 7 օր առաջ փակցվում է հաստատված տեղում:
- ✚ Լսարանային բոլոր տեսակի պարապմունքները 80 րոպե են: Որպես կանոն մեկ պարապմունքը միավորում է 2 ակադեմիական ժամ: Պարապմունքների միջև դասամիջոցը 10, 20 րոպե է:
- ✚ Ուսումնական պարապմունքների բնականոն ընթացքը չխաթարելու համար պարապմունքները սկսվելուց հետո ուսումնական մասնաշենքում պետք է լինեն լրություն և կարգապահություն: Չի թույլատրվում ընդհատել պարապմունքները, դրանց անցկացման ժամանակ մտնել լսարան և դուրս գալ լսարանից:
- ✚ Ուսումնական պարապմունքների սկիզբը և ավարտը հաստատվում է ռեկտորի կողմից՝ ժամը 09:30-15:30-ի սահմաններում:

***Ուսումնական պարապմունքների կազմակերպումը ԱԲՀ-ում***

Համալսարանում սահմանվում են ուսումնական պարապմունքների հիմնականում հետևյալ տեսակները՝ դասախոսություն, գործնական, սեմինար ու լաբորատոր պարապմունքներ, ուսումնաարտադրական պրակտիկա, ստուգողական աշխատանքներ:

**1. Դասախոսություն**

Դասախոսությունը որևէ գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ դասախոսի կողմից տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ պարզ, հասկանալի և ընկալելի գիտելիքներ: Ըստ էության՝ դասախոսությունը ուսանողի համար գիտական գործունեություն ծավալելու մի ճանապարհ է,



որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցման, ուսումնասիրման և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ:

Ուսումնական պլանով նախատեսված դասավանդվող առարկաների միջև չկան առավել կամ պակաս կարևոր առարկաներ: Բոլորն էլ անհրաժեշտ են, քանի որ յուրաքանչյուր առարկա կարևոր է մասնագիտական գիտելիքների հարստացման և աշխարհայացքի զարգացման համար:

Շփումը դասախոսի և լսարանի միջև այն կարևորագույն գործոններից է, որոնցից կախված է դասախոսության որակը: Դասախոսության համար բավարար չէ միայն դասախոսի գերազանց պատրաստվածությունը: Դասախոսությունը պետք է անցկացվի դասախոսի և ուսանողի համատեղ ջանքերով: Այսինքն՝ ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Դասախոսության ընթացքում նյութի իմաստավորման գործընթացն աշխատանքի պարտադիր բաղադրիչն է: Մխավում է նա, ով կարծում է, թե կարևորը գրելն է, իսկ հասկանալը կարելի է հետո: Այնինչ, դասախոսությունը ոչ թե թելադրություն է, այլ նոր նյութի ընկալում և տեղեկատվության յուրովի իմաստավորում:

Նյութի առավել ծավալուն և դժվար մասերը, որոնց ընկալման համար դասախոսության ընթացքում ժամանակը չի բավարարում, պետք է նշել, որպեսզի հետագայում դասախոսի հետ դրանք կրկին քննարկվեն: Պետք չէ ամաչել հարցեր տալուց, քանի որ հարցերը վկայում են նյութն առավել լավ յուրացնելու ձգտման մասին: Յուրաքանչյուր դասախոսությունից առաջ անհրաժեշտ է կարդալ նախորդ դասախոսության նյութը, քանի որ պատրաստված ուսանողը հեշտությամբ է ընկալում թեմայի շարունակությունը և նոր հասկացությունները: Ինչ խոսք, կիսամյակի ընթացքում կրկնվող նյութն ավելի դյուրին է յուրացվում, ինչն էլ, բնականաբար, օգնում է քննություններին առավել պատրաստված ներկայանալուն:

### *Հուշում.*

- Դասախոսությունից առաջ անհրաժեշտ է կարդալ գրառումները և վերհիշել նախորդ դասախոսությունը:
- Ուղղել սխալները, բացել կրճատումները և լրացնել բաց թողնված տեղերը:
- Դասախոսության գրառումները համեմատել ձեռնարկի համապատասխան թեմայի հետ՝ կատարելով անհրաժեշտ լրացումներ և շտկումներ:
- Գրառումների մեջ ընդգծել կարևոր հատվածները:

## **2. Մեմինար**

Մեմինարը խմբային գործնական պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է ինքնուրույն, բանավոր պարզ, հասկանալի և համառոտ շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետը և եզրահանգումները: Մեմինարի կարևորագույն բաղադրիչներից է ուսանողի ելույթը համակուրսեցիների առջև: Մեմինար պարապմունքների ժամանակ շատ կարևոր է սեփական մտքերի լիարժեք շարադրումը:

Հարկ է նշել, որ ուսանողների մեծ մասը լավ չի տիրապետում բանավոր խոսքին, ուստի խոսելու ընթացքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ոչ միայն լեզվի բառապաշարին և քերականական կառույցներին, այլև ճարտասանության և հռետորական արվեստին:

### *Հուշում.*

- Եթե Դուք զգում եք, որ լավ չեք տիրապետում բանավոր խոսքին, ապա կազմե՛ք շնորհանդես: Հիշե՛ք միայն պլանը, այլ ոչ թե համառոտ պատասխանները, քանի որ այդ դեպքում Դուք մեխանիկորեն կարդալու եք այն:
- Աշխատե՛ք պատասխանել՝ հետևելով պլանի կետերին:
- Աշխատե՛ք չհուզվել, քանի որ Դուք գտնվում եք Ձեր ընկերների շրջապատում, իսկ նրանք բարյացակամ են տրամադրված Ձեր հանդեպ:
- Աշխատե՛ք հստակ կառուցել Ձեր խոսքը:
- Աշխատե՛ք տվյալ հարցի վերաբերյալ նախօրոք բարձրաձայն շարադրել Ձեր մտքերը:
- Հաղթահարեք լսարանի առջև ելույթ ունենալու բարդույթը, համարձակ մասնակցե՛ք բանավեճերին և սխալվելու դեպքում էլ երբեք մի՛ հուսահատվեք:

### **3. Գործնական պարապմունքներ**

Գործնական են կոչվում այն պարապմունքները, որոնք անցկացվում են դասախոսի ղեկավարությամբ և ուղղված են տեսական գիտելիքների խորացմանը և աշխատանքային որոշակի մեթոդների յուրացմանը: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը ձեռք է բերում որոշակի հմտություններ:

#### *Հուշում.*

- Մի՛ փորձեք գտնել պատրաստի պատասխաններ և դրանք ներկայացնել՝ որպես Ձեր կողմից կատարված աշխատանք:
- Ավելի ճիշտ և օգտակար է տվյալ թեմայի վերաբերյալ տեսական նյութի խորապես ուսումնասիրելը և առաջադրված խնդիրներին ինքնուրույն լուծում տալը:
- Նշենք, որ առաջադրված խնդիրների յուրօրինակ լուծումները նպաստում են մտավոր կարողությունների զարգացմանը:

### **4. Լաբորատոր պարապմունքներ**

Լաբորատոր պարապմունքը նպատակ ունի ամրապնդելու ուսումնասիրվող թեմայի տեսական դրույթները: Լաբորատոր պարապմունքների ժամանակ ուսումնառողները դասավանդողների ղեկավարությամբ անցկացնում են փորձեր կամ պրակտիկ հանձնարարություններ, որոնց օգնությամբ իմաստավորվում են նոր և/կամ ձեռքբերված գիտելիքները: Այն ուսումնառողներից պահանջում է ավելի մեծ ակտիվություն ու ինքնուրույնություն, ինչպես նաև հաղորդում ինքնուրույն վերլուծության, տվյալների ամփոփման, լաբորատոր սարքավորումների, սարքերի հետ աշխատելու փորձ և հմտություններ:

### **5. Կրթական կարիքների խորհրդատվություն**

Խորհրդատվության ժամանակ ուսանողները պարզաբանում են անհասկանալի հարցերը, դասախոսության բովանդակության կամ մեթոդիկայի հետ կապված խնդիրները, ինչպես նաև «լրացնում» են բաց թողած դասախոսությունները: Խորհրդատվությունը Համալսարանում կազմակերպվում է արտալսարանային, սովորաբար, նշանակվում է քննությունից առաջ, և ուսանողները դասախոսի հետ պարզաբանում են քննական հարցերին առնչվող խնդիրները: Խորհրդատվության ներկայանալը պարտադիր չէ, եթե չկան այնպիսի թեմաներ, որոնք լրացուցիչ պարզաբանումների կարիք չունեն: Իրականում, խորհրդատվության ժամանակ

ուսանողների և դասախոսի միջև՝ հանգիստ մթնոլորտում, տեղի է ունենում հաղորդակցում, որը նպաստում է նյութի ավելի լավ յուրացմանը:

### **6. Ուսումնաարտադրական պրակտիկա**

Ուսումնական գործընթացի կարևորագույն մասն է կազմում ուսումնաարտադրական պրակտիկան, որն ուսանողները, ըստ իրենց մասնագիտական կողմնորոշման, անցկացնում են համապատասխան կլինիկաներում, պոլիկլինիկաներում՝ համալսարանի հետ կնքված երկկողմանի պայմանագրի հիման վրա:

Պրակտիկայի տեսակները, տևողությունը և ժամկետները ամրագրված են ուսումնական պլաններում:

### **Հուշում.**

Բուհում սովորելու ընթացքում գիտելիքների և մասնագիտական հմտությունների հիմնական մասն ուսանողները ձեռք են բերում ինքնուրույն աշխատանքի շնորհիվ:

Ինքնուրույն պարապմունքներն օգնում են ուսանողին ամրապնդելու և համակարգելու ստացված գիտելիքները, ընդլայնելու աշխարհայացքն ու զարգացնելու մասնագիտական հետագա գործունեության համար անհրաժեշտ որակները: Անհրաժեշտ է ինքնուրույն աշխատանքը սկսել կիսամյակի առաջին իսկ օրերից, որպեսզի ձևավորվի որոշակի կարգ և աշխատանքային հավասարաչափ ռիթմ: Աշխատանքը հստակորեն կանոնակարգելու համար հարկ է գործադրել ջանքեր և զարգացնել կամային հատկանիշներ, իսկ այդ ամենի արդյունքում ամենօրյա աշխատանքը կդառնա թե՛ սովորություն, թե՛ պահանջ:

### **ՔՆՆԱՇՐՉԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

Համաձայն գործող կանոնակարգի՝ բուհում յուրաքանչյուր առարկայական դասընթաց ավարտվում է պարտադիր գնահատմամբ՝ քննություն կամ ստուգարք, որոնց անցկացման ընթացքում բացահայտվում է ուսանողի կողմից գիտելիքի յուրացման աստիճանը:

Քննական և ստուգարքային փուլերը հեշտությամբ հաղթահարելու համար անհրաժեշտ է կատարել ընթացիկ բոլոր առաջադրանքները:

Սովորաբար հնարավոր չէ քննությանը նախորդող օրերին լիարժեք յուրացնել քննական նյութը: Քննությունը կամ ստուգարքը հաջողությամբ հանձնելու համար անհրաժեշտ է նաև պատրաստվել ընթացիկ գործնականներին:

### **Հուշում.**

- Եթե վերցրել եք այնպիսի տոմս, որի հարցերին պատասխանելը որոշակի դժվարություններ է պարունակում, մի՛ շտապեք փոխել տոմսը, (քանզի փոխելով տոմսը դուք կորցնում եք միավոր). նախ՝ փորձե՛ք հիշել այն, ինչ գիտեք այդ տոմսի հարցերի վերաբերյալ:
- Պատասխանե՛ք միայն բուն հարցին: Մի՛ փորձեք ցույց տալ Ձեր տեղեկացվածության աստիճանը՝ խոսելով այլ ոլորտներին առնչվող թեմաներից, քանի որ կարող է այնպիսի տպավորություն ստեղծվել, թե տվյալ հարցին լավ չեք պատրաստված: Դրանով կարող եք դասախոսին դրդել, որ Ձեզ մի շարք լրացուցիչ հարցեր տա, ինչը կարող է և Ձեր օգտին չլինել:

- Մի՛ փորձեք խոսքի տեմպի արագացման միջոցով պատմել ավելին: Սակայն պետք չէ նաև շատ դանդաղ խոսել:
- Ուշադրություն դարձրե՛ք դասախոսի բոլոր հարցերին և դիտողություններին, քանի որ դասախոսը գիտակցաբար կամ ոչ գիտակցաբար կարող է հուշել հարցի վերաբերյալ իր տեսակետը, ինչն էլ կարող էք պատասխանելու ընթացքում օգտագործել:
- Մի՛ վախեցեք լրացուցիչ հարցերից, քանի որ դրանք դասախոսը հաճախ օգտագործում է որպես Ձեզ օգնելու միջոց:

**ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Բարձրագույն կրթության եվրոպական միասնական տարածքի ստեղծման նպատակով՝ 1999 թվականի հունիսի 19-ին 29 եվրոպական երկրների կողմից ընդունվեց Բոլոնիայի հռչակագիրը, որով և հիմք դրվեց Բոլոնիայի գործընթացին:

**Բոլոնիայի գործընթացի ուղղություններն են.**

- կրթական աստիճանների ճանաչումը (ոչուրընթեռնելի և համադրելի աստիճանների համակարգի ընդունում),
- բարձրագույն կրթության երեք աստիճանների (բակալավրիատ, մագիստրատուրա և դոկտորանտուրա) ընդունումը,
- կրեդիտների համակարգի հիմնումը,
- ուսանողների, գիտամանկավարժական և վարչական կազմի շարժունության ապահովումը,
- մասնագետների պատրաստման որակի ապահովման ասպարեզում եվրոպական չափանիշների ընդունումը,
- բարձրագույն կրթության Եվրոպական չափայնության խթանումը,
- հարատև կրթության կարևորումը,
- բուհերի և ուսանողների ներգրավումը,
- Եվրոպական բարձրագույն կրթության գրավչության խթանումը,
- Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի և Եվրոպական հետազոտական տարածքի (ԵՀՏ) համահյուսումը:

Հայաստանը, միանալով Բոլոնիայի գործընթացին, որոշակի քայլեր է իրականացրել՝ Եվրոպական բարձրագույն կրթության միասնական տարածքին ինտեգրվելու համար:

2005 թվականի դեկտեմբերի 22-ին ՀՀ կառավարությունը հաստատել է «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» որոշումը, որից հետո սկսվել են կոնկրետ քայլեր ձեռնարկվել մեր երկրի բարձրագույն կրթության՝ կրեդիտային համակարգով կազմակերպման ուղղությամբ: Համաձայն այդ որոշման՝ հանրապետության 6 բուհերում կիրառվել է կրթափորձ, որից հետո սկսվել է որոշակի գործընթաց:

Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը ներդրվել է 1989թ. «Էրազմուս» ծրագրի շրջանակում՝ որպես արտասահմանում ուսանողի ձեռք բերած կրեդիտների ճանաչման գործիք այն բուհի կողմից, որտեղից ուսանողը մեկնել է

ուսումնառության: Հետագայում այն սկսեց ծառայել ոչ միայն որպես կրեդիտների փոխանցման, այլ նաև որպես կրեդիտների կուտակման գործիք կրթական ծրագրի շրջանակում:

2009թ. մշակված «Կրեդիտների կուտակման և փոխանցման Եվրոպական համակարգ»-ի ուղեցույցը վերանայվել է նոր իրավիճակին համապատասխան և հաստատվել է Բարձրագույն կրթության նախարարների Երևանյան գագաթնաժողովում՝ 2015թ.: Նոր ուղեցույցը հաշվի է առնում Բոլոնիայի գործընթացի այնպիսի ձեռքբերումներ, ինչպիսիք են Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի ձևավորումը, ողջ կյանքի համար կրթության անհրաժեշտության գաղափարի ամրապնդումը, Բարձրագույն կրթության պարադիգմայի փոփոխությունը դեպի ուսանողակենտրոն ուսուցում, կրթական վերջնարդյունքների ավելի լայն կիրառումը և դասավանդման ու ուսումնառության նոր մեթոդների ներդրումը:

ՀՀ Բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգը ներդրվել է 2007/2008 ուստարվանից՝ կրթական կրեդիտների՝ որպես ուսումնական ծրագրերի պարտադիր տարր ներմուծմամբ և ուսանողների ակադեմիական տեղեկագրերում դրանց պարտադիր նշումով: Կրեդիտային համակարգի ամբողջական (փոխանցման և կուտակման) կիրարկումը պարտադիր էր՝ սկսած 2010/2011 ուստարվանից:

ԱԲՀ-ում 2010–2011 ուսումնական տարվանից ներդրվել է կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը (*ECTS*), բոլոր մասնագիտությունների ուսումնական պլանները կազմվել են կրեդիտային համակարգի հենքով:

Յուրաքանչյուր բուհ ինքնուրույն է իր կրթական ծրագրերում կրեդիտային համակարգի կիրարկման հարցերում: Հայաստանի Հանրապետությունում գործող կրեդիտային համակարգի օրինակելի կարգի հիման վրա բուհերի կողմից ստեղծված կրեդիտային համակարգով ուսուցման կազմակերպման կարգը հաստատվում է տվյալ բուհի գիտական խորհրդի կողմից:

Կրեդիտային համակարգի ներդրմամբ Համալսարանում զգալիորեն բարելավվել է առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքը և աշխատաձևվալը՝ իրատեսական նախադրյալներ ստեղծելով ուսանողների ինքնուրույն ուսումնական աշխատանքի հնարավորությունները մեծացնելու, ուսումնական ծրագրերը լավագույնս յուրացնելու և դրանցով սահմանված կրթական արդյունքները ձեռքբերելու համար: Այն ընդլայնում է շրջանավարտի ապագա կարիերայի և մասնագիտական աշխատուժի գլոբալ շուկայում աշխատանք գտնելու հնարավորությունները:

## ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Համաեվրոպական ECTS (Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ) կրեդիտային համակարգի հետևյալ հասկացությունները և դրույթներն ընդունված են Հայաստանի Բարձրագույն կրթության համակարգում և գործում են ԱԲՀ-ի անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրում:

**1. Կրթական վերջնարդյունք.** այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել ուսանողն առանձին դասընթացի, կրթական մոդուլի կամ մասնագիտության կրթական ծրագրի ավարտին: Կրթական վերջնարդյունքը գուգակցվում է համապատասխան

գնահատման չափանիշով, որը հնարավորություն է տալիս դատել ծրագրով սահմանված կրթական վերջնարդյունքի ձեռքբերման վերաբերյալ: Կրթական վերջնարդյունքը և գնահատման չափանիշը միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները:

**2. Կարողունակությունը (կոմպետենցիան)** գիտելիքի, ընկալման, ունակությունների և հմտությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել ընդհանրական վերջնարդյունք (ԸՎ), ընդհանուր մասնագիտական վերջնարդյունք (ԸՄՎ) և մասնագիտական վերջնարդյունք (ՄՎ):

**3. Կրթական (ուսումնական) մոդուլը** ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն միավորն է, որի համար կրեդիտ է տրվում: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը 1 կիսամյակ է՝ դրանով սահմանված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ: Կրթական մոդուլին հատկացված կրեդիտներն ուսանողին շնորհվում են ամբողջությամբ, այլ ոչ թե առանձին մասերով:

**4. ECTS կրեդիտը** դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռքբերելու համար ուսանողից պահանջվող ուսումնառության ժամաքանակով արտահայտված բեռնվածքի չափման համընդունելի միավոր է, որը տրվում է ուսանողին դասընթացով նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

**5. ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշներն են.**

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,
- կրեդիտը չափում է ուսանողի միայն ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),
- կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված կրթական վերջնարդյունքների գնահատման անցումային շեմը հաղթահարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին,
- ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
- կրեդիտը չի փոխարինում թվանշաններով ուսանողի գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով (գնահատման միավորներով),
- կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, որը չափվում է գնահատականներով: Կրեդիտային և գնահատման համակարգերի միջև փոխադարձ ներգործության որևէ կապ չկա:

**6. Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը** եվրոպական բարձրագույն կրթության տարածքում գործող ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական

կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման, կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո: Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որը նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռքբերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

## **ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀՀ ԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

### ***Տարեկան աշխատածավալը և ուսումնական բեռնվածությունը***

- ՀՀ բարձրագույն կրթության համակարգում բոլոր կրթական աստիճաններում առկա ուսուցմամբ ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի:
- ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:
- Ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, որից 34-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով՝ (աշնանային և գարնանային): Ըստ այդմ, կիսամյակի ուսումնական պարապմունքների տևողությունը սահմանվում է 17 շաբաթ:
- Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի, շաբաթական լսարանային բեռնվածությունը կազմում է 30 ժամ:
- Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:
- Բացառիկ դեպքերում, ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողը, համապատասխան թույլտվության դեպքում, կարող է ստանձնել լրացուցիչ ուսումնական բեռնվածություն:

### ***Կրթական ծրագրերի աշխատածավալը***

- Անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը «Բուժական գործ» մասնագիտության համար 360 կրեդիտ է, իսկ «Ստոմատոլոգիա» մասնագիտության համար՝ 300 կրեդիտ:
- Կրթական ծրագրերում ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին:

### ***Կրեդիտների հատկացումը***

- Կրթական ծրագրի առանձին դասընթացներին (մոդուլներին) կրեդիտների հատկացումը էլնում է մոդուլով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար ուսանողից պահանջվող միջին աշխատաժամանակի (լրիվ ուսումնական բեռնվածության) իրատեսական կանխատեսումից:



- Դասընթացի ծրագիրը մշակող ուսումնական ստորաբաժանումը՝ ամբիոնը, այնպես է պլանավորում ուսանողի ուսումնական աշխատանքը, որ դրա կատարման համար պահանջվող ժամաքանակը համապատասխանի դասընթացին հատկացված կրեդիտների ժամային համարժեքին:
- Կրթական մոդուլին հատկացվող կրեդիտները պետք է ունենան ամբողջական արժեքներ՝ ուսումնական ծրագրի մանրատվածության վտանգից խուսափելու և դասընթացների ընտրությունը (այդ թվում նաև այլ կրթական ծրագրերից) դյուրացնելու նպատակով:
- Ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ծրագրի ավարտից հետո կազմակերպվող ամփոփիչ ատեստավորմամբ (ավարտական քննությամբ):

### ***Կրեդիտների փոխանցումը***

- Այլ բուհերից ԱԲՀ կրթական ծրագրեր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների (կիսամյակ, ուստարի) տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:
- Այլ կրթական ծրագրից ԱԲՀ կրթական ծրագիր կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե դրանց բովանդակությունները միանման են, կամ առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:
- Այլ բուհում ԱԲՀ-ի ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ԱԲՀ-ի և ընդունող բուհի միջև:
- Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացները կազմակերպվում են ԱԲՀ-ի Ուսումնական մասի, Արտաքին կապերի բաժնի և դեկանատի կողմից:

### ***Դասընթացները և կրթական մոդուլները***

- Ուսումնական պլանում ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին:
- Մեծածավալ դասընթացներն անհրաժեշտության դեպքում բաժանվում են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:
- Դասընթացները (կրթական մոդուլները) ըստ յուրացման բնույթի բաժանվում են 2 հիմնական խմբի՝
  - ա) պարտադիր դասընթացներ, որոնց յուրացումն ամրագրված է որոշակի կիսամյակներում,
  - բ) լրացուցիչ դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

### **Ավանդական բժշկության համալսարանում սովորողների շարժունությունը**

Ակադեմիական շարժունությունը ուսանելու նպատակով մեկ այլ ուսումնական հաստատությունում սովորողի կրթության շարունակությունն է:

ԱԲՀ-ի ուսանողների շարժունությունը կարգավորվում է «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգով»՝ ընդունված ՀՀ Կառավարության կողմից 2011թ. Օգոստոսի 25-ին N 1240-Ն որոշմամբ, ինչպես նաև «ԱԲՀ-ի սովորողների ակադեմիական շարժունության» կարգով):

**Ամբողջ տեղեկատվությունը տե՛ս  
Համալսարանի պաշտոնական կայքում տեղադրված  
«ԱԲՀ-ում սովորողների ակադեմիական շարժունությունը» կարգում:**

**ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ, ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Ուսանողակենտրոն կրթությունը բնութագրվում է ուսուցման նորարարական մեթոդներով, որոնց նպատակն է ուսուցման գործընթացում դասավանդողների և ուսումնառողների միջև կապի խթանումը, ուսանողներին իրենց սեփական ուսուցմանն ակտիվ մասնակիցներ դարձնելը, այնպիսի փոխանցելի հմտությունների խթանումը, ինչպիսիք են խնդիրների լուծումը, քննադատական մտածողությունը և ռեֆլեկտիվ մտածողությունը: Այն ապահովում է նաև հմտություններ կյանքի համար:

Ուսանողակենտրոն դասավանդման ժամանակ դասավանդողը հանդես է գալիս որպես ուղղորդող, միջնորդ, քան որպես հրահանգիչ:

Ուսանողակենտրոն ուսուցումը և դասավանդումը կարևոր դեր են խաղում ուսումնական գործընթացում ուսանողների մոտիվացիայի և ինքնաարտահայտման համար: Այն ենթադրում է.

Ավելի շատ ակտիվ, ոչ պասիվ ուսուցում

Ուշադրություն առավել խորը ուսուցմանն ու ըմբռնմանը. ուսանողների կարիքների վերհանում, ուսուցման տարբեր ձևերի կիրառում

Ուսանողի կողմից պատասխանատվության և հաշվետվողականության բարձրացում

Ուսումնառողի ինքնավարության զգացումի խրախուսում և միաժամանակ դասախոսի կողմից անհրաժեշտ աջակցություն

Համագործակցություն դասավանդողի և ուսումնառողի միջև

Փոխադարձ հարգանք դասախոս-ուսանող փոխհարաբերություններում

Ուսանողների բողոքների քննարկման ընթացակարգի առկայություն

**Դասավանդումը, ուսումնառությունն ու գնահատումը** դիտարկվում են միասնական տրամաբանության մեջ: Դասավանդումը պետք է ուսանողների համար բավարար պայմաններ ստեղծի ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման համար:

Դասընթացի սկզբին դասախոսը պարտավոր է ուսանողներին ծանոթացնել դասընթացի ավարտին ակնկալվող կրթական վերջնարդյունքներին, դրանց գնահատման սկզբունքներին և ընթացակարգերին:

Դասախոսի ակադեմիական ազատությունը թույլ է տալիս նրան իր հայեցողությամբ ընտրել դասավանդման և գնահատման մեթոդներ, որոնք պետք է առավելագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանն ուսանողների կողմից, հաշվի առնեն ընդունակությունների տարբեր աստիճաններ ունեցող ուսանողների կարիքները, խթանեն ուսանողների ակտիվությունը և ինքնուրույն գործելակերպը, ապահովեն հետադարձ կապ ուսանողի և դասախոսի միջև:

## **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ**

Որակի ներքին ապահովման գործընթացներն ուսումնական հաստատության գործունեության բաղկացուցիչ մասն են կազմում: Ուսանողները, շրջանավարտները, գործատուները և հասարակությունը բարձր որակ են ակնկալում ուսումնական հաստատություններից: Որակի ապահովումը կարևորագույն գործիք է բուհի կրթական գործունեության համար, որը երաշխավորում է ոչ միայն հասարակության պահանջների և կարիքների բավարարումը, այլև՝ բուհի անկախությունը և ինքնավարությունը: Ուսանողների մասնակցությունը բուհի կրթական գործընթացներին և նրանց բովանդակության գնահատմանը Բոլոնյան գործընթացի հիմնական պահանջներից է:

Բուհի որակի ներքին ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավվածությունը կարևորվել է ինչպես 2005թ. Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների մշակման, այնպես էլ 2015թ. դրանց վերանայման գործընթացներում: Ուսանողները բուհի հիմնական շահառուներն են, իսկ մատուցվող ծառայություններից և ակնկալվող արդյունքներից նրանց բավարարվածության աստիճանը կարևոր ցուցիչ է կրթության որակի ապահովման գործընթացներում:

Ուսանողները դասավանդման և ուսումնառության ընթացքում ձեռք են բերում զգալի ուսանողական փորձ, որը կարող է ուղղորդել բուհի ուսումնական գործընթացի վերանայման, ուսումնառության և դասավանդման արդյունավետության գնահատման, ժամանակին կարիքների վերհանման, գնահատման և շտկման, կրթական ծրագրերի վերանայման համար:

Ուսանողական խորհուրդը հնարավորություն է տալիս ուսանողներին՝ ստեղծելու պայմաններ ոչ միայն մասնագիտական, ստեղծագործական, հետազոտական և այլ ոլորտներում ուսանողների ինքնադրսևորմանը, այլև ուսանողների կարիքների վերհանման և ժամանակին արձագանքման, բուհի կառավարման գործընթացներում մասնակցության, ուսուցման կազմակերպման և այլ հարցերում:

Ուսանողներին հնարավորություն է ընձեռվում մասնակցել բուհում կազմակերպված սեմինարներին, ֆորումներին ու աշխատաժողովներին, ընդգրկվել «Որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամի «Ուսանողության ձայն» նախագծի նախաձեռնած ուսումնասիրություններին, մասնակցել բուհերի հավատարմագրման գործընթացին որպես փորձագետ կամ որպես կամավոր ընդգրկվել ՈԱԱԿ աշխատանքներում:

Կարևորվում է հավատարմագրման գործընթացում ուսանողների մասնակցությունը և բուհի ինստիտուցիոնալ ու ծրագրային կարողությունների գնահատումը ուսանողի տեսանկյունից, ուստի փորձագիտական խմբերում պարտադիր ընդգրկվում է մեկ ուսանող:

Այսպիսով, ուսանողների ներգրավումը որակի գործընթացներում կարևորվում է, քանի որ՝



- *երաշխավորում է այն փաստը, որ ուսանողների կարծիքը կարևոր նշանակություն ունի բուհում որոշումների կայացման գործում (ուսանողներն ընդգրկված են գիտական խորհրդում և որակի ապահովման հանձնաժողովում),*
- *ուսանողների մոտ ստեղծում է սեփականատիրոջ զգացում սեփական կրթության նկատմամբ,*
- *ուսանողներին հնարավորություն է ընձեռվում դասավանդման և ուսումնառության վերաբերյալ կարծիք արտահայտել, ներդրում ունենալ կրթության կազմակերպման գործում. (նրանք ընդգրկված են պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման որակի և վարչական կազմի գործունեության գնահատման գործընթացներում, Համալսարանի կողմից առաջարկվող ծառայությունների և առկա ռեսուրսային բազայի որակի գնահատման գործընթացներում և այլն,)*
- *խրախուսում է տարբեր շահակիցների միջև կրթական ծառայությունների վերաբերյալ կառուցողական բանավեճը, ստեղծվում է կապ բուհի աշխատակազմի և ուսանողների միջև:*

## **ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱԲՀ-ՈՒՄ**

### ***Համակարգի հիմնադրույթները***

ԱԲՀ-ում գործում է ուսանողների գնահատման բազմագործոն համակարգ, որի կիրառման հիմնական նպատակներն են՝

- ուսումնական կիսամյակի ընթացքում ուսանողների գիտելիքների պարբերաբար ստուգման և գնահատման միջոցով կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողների առաջադիմությունը, ուսումնառության գործընթացում ապահովել մրցակցություն, խրախուսել ուսանողի ինքնուրույն աշխատանքը, բարելավել դասահաճախումները:
- Ընթացիկ ստուգումների իրականացման օգնությամբ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից օգտագործել որպես հետադարձ կապ՝ դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման և կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի արդյունաբեր գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը՝ գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչները:

**Ուսանողների գնահատումը** ներառում է հետևյալ բաղադրիչները՝

- դասընթացին ուսանողի մասնակցություն՝ դասահաճախումների հաշվառման օգնությամբ,
- դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ և միջանկյալ ստուգումներ կիսամյակի ընթացքում,
- ուսումնական մոդուլի ամփոփիչ գնահատում քննաշրջանում,
- ինքնուրույն անհատական աշխատանքների գնահատում (ռեֆերատ, շնորհանդեսի պատրաստում և ներկայացում, ելույթներ ուսանողական գիտաժողովում՝ տվյալ դասընթացի ծրագրի շրջանակներում):

**Աղյուսակ 1**

**Գնահատման ձևավորման բաղադրիչներ**

	<b>ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ</b>	<b>ՄԻԱՎՈՐ</b>
1.	<b>Հաճախումներ</b>	<b>16 միավոր</b>
2.	<b>Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում</b>	<b>70 միավոր</b>
3.	<b>Ինքնուրույն անհատական աշխատանք</b>	<b>14 միավոր</b>
<b>Ընդամենը</b>		<b>100 միավոր</b>

**Գնահատման մեթոդաբանությունը**

Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը 1 կիսամյակ է՝ դրանով սահմանված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ (ստուգարք կամ քննություն):

Ուսանողների գիտելիքները գնահատվում են ընթացիկ, միջանկյալ ստուգումների, ամփոփիչ քննությունների միջոցով, որոնք կարող են անցկացվել բանավոր կամ գրավոր (այդ թվում՝ թեստային տարբերակ կամ գրավոր շարադրում), գրավոր-բանավոր ձևերի համակցությամբ, գործնական հմտությունների, կարողությունների ստուգմամբ՝ ելնելով դասընթացի առանձնահատկություններից:

Գնահատման ձևավորման բաղադրիչներում կարևորվում է ուսանողների գիտելիքների ընթացիկ ստուգումը՝ ակտիվությունը խթանելու նպատակով:

▪ Քննական դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) միավորը ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ քննական դասընթացի բաղադրիչների աղյուսակի (տե՛ս գործող «ԱԲՀ ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման» կարգը):

▪ Ստուգարքային դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային/ միավորը ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ ստուգարքային դասընթացի բաղադրիչների (տե՛ս գործող «ԱԲՀ ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման» կարգը):

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՍԱՆԴՂԱԿԸ

Ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

### *Աղյուսակ 2*

Գնահատական	Գնահատման միավորը	Գնահատման տառային նիշը
«Գերազանց»	96-100	A+
	90-95	A
«Լավ»	80-89	B+
	70-79	B
«Բավարար»	60-69	C+
	51-59	C
«Անբավարար»	50 և ցածր	D
«Ստուգված»	≥51	S
«Չստուգված»	< 51	U

### *Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը*

- Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար Համալսարանում գործում է համակարգչային հատուկ ծրագիրը: Ուսանողի ընդունման պահից սկսած, դեկանատը վարում է ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանից անմիջապես հետո ծրագրում մուտքագրվում են ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և միջին որակական գնահատականը (ՄՈԳ):
- Ուսանողի վաստակած կրեդիտներն ամրագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ տվյալ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:
- Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝
  - ✓ գումարային կրեդիտների քանակը,
  - ✓ գնահատված կրեդիտների քանակը,
  - ✓ վարկանիշային միավորները,
  - ✓ միջին որակական գնահատականը:
- Գումարային կրեդիտը** (Կ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

5. **Գնահատված կրեդիտը** (ԳԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է թվային անցումային միավորներով.

$$\text{ԳԿ} = \sum \text{Կրեդիտ } i :$$

6. **Վարկանիշային միավորը** (ՎՄ) յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար:

$$\text{ՎՄ} = \sum \text{Կրեդիտ } i \times \text{Գ } i ,$$

Որտեղ  $\text{Գ}_{արդ}$ -ը տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է:

7. **Միջին որակական գնահատականը** (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ).

$$\text{ՄՈԳ} = \text{ՎՄ} / \text{ՈԿ}$$

8. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

#### ***Գնահատականի բողոքարկում***

Համալսարանում իրականացվող կրթական ծրագրերում յուրաքանչյուր դասընթաց կազմակերպվում է միջանկյալ և հանրագումարային ամփոփիչ ստուգմամբ: Բոլոր դասընթացներն ավարտվում են պարտադիր գնահատմամբ: Ուսանողի կողմից միջանկյալ ստուգումների, ամփոփիչ քննությունների և ամփոփիչ ատեստավորման գնահատականը ենթակա է բողոքարկման, եթե ուսանողը համաձայն չէ գնահատականի հետ և ունի հիմնավոր ու բավարար հիմքեր բողոքարկման համար:

Բողոքարկման ընթացակարգը հետևյալն է՝

Բողոքարկման դեպքում ուսանողը դիմում է ներկայացնում դեկանին:

- ***Միջանկյալ ստուգման, բանավոր քննության*** դեպքում դիմումը լրացվում է անմիջապես տվյալ ուսանողի քննությունից հետո՝ առանց քննասենյակից դուրս գալու, դեկանը կազմում է հանձնաժողով և դեկանատի ներկայացուցչի, ամբիոնի վարիչի հետ կատարվում է բողոքարկումը:

Ուսանողի գնահատումը կարող է բարձրացվել, եթե նա հիմնավորում է և ապացուցում, որ հարցին տվել է սպառիչ պատասխան, կամ ցուցաբերվել է իր նկատմամբ սուրբեկտիվ մոտեցում, հակառակ դեպքում գնահատականը մնում է անփոփոխ:

- ***Գրավոր կամ թեստային ստուգման*** դեպքում բողոքարկումը կատարվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ բողոքարկման դիմումին կցելով ուսանողի գրավոր աշխատանքը:

✓ Գնահատականը կարող է բարձրացվել, եթե բացահայտվում է ստուգման սխալ, հակառակ դեպքում գնահատականը մնում է անփոփոխ:

Բողոքարկման արդյունքում վերջնական գնահատականը հաստատվում է բողոքարկման հանձնաժողովի անդամների կողմից և ամրագրվում է տեղեկագրում:



- Բողոքարկման արդյունքում փոփոխված գնահատականը ենթակա չի կրկնակի բողոքարկման:

**ՈՒՍՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ**

1. Ըստ ուսման առաջադիմության ուսանողները դասակարգվում են առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում գտնվող և հեռացման ենթակա ուսանողների:
2. Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե՝
  - կիսամյակում ունի 30 կրեդիտ միջին ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով),
    - հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների կրեդիտները,
    - ապահովել է տվյալ կրթական աստիճանի (ծրագրի) համար սահմանված կիսամյակային ՄՈԳ-ի նվազագույն շեմը:
3. Ուսանողը համարվում է փորձաշրջանի կարգավիճակում, եթե չի բավարարել նախորդ կետում նշված երեք պայմաններից որևէ մեկը:
4. Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանողին հնարավորություն է տրվում ուղղել թերացումներն ու բացթողումները և բարձրացնել ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան: Փորձաշրջանի տևողությունը սահմանում է բուհը:
5. Փորձաշրջանի կարգավիճակում գտնվող ուսանողը դառնում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետում դուրս չի գալիս այդ կարգավիճակից:
6. Ուսանողը համարվում է հեռացման ենթակա, ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով՝ կիսամյակի արդյունքներով 12-ից ավել կրեդիտներ կազմող ակադեմիական պարտքերի դեպքում:

Ամբողջ տեղեկատվությունը տես  
**«ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ»**  
**«ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ»-ում:**

**ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ**

Համալսարանում գործում են պրակտիկայի հետևյալ տեսակները.

**«Բուժական գործ» մասնագիտություն՝**

- Բուժքրոջ օգնական
- Մանիպուլյացիոն բուժքրոջ օգնական
- Բժշկի օգնական (թերապիա)
- Բժշկի օգնական (վիրաբուժություն)
- Բժշկի օգնական (մանկաբարձություն և գինեկոլոգիա)
- Շտապ օգնության բժշկի օգնական

**«Ստոմատոլոգիա» մասնագիտություն՝**

- Բուժքրոջ օգնական
- Բժիշկ-ստոմատոլոգի (թերապևտ) օգնական
- Բժիշկ-ստոմատոլոգի (վիրաբույժ) օգնական
- Բժիշկ-ստոմատոլոգի (օրթոպեդ) օգնական
- Մանկական բժիշկ ստոմատոլոգի օգնական

Ուսումնական պլաններում ամրագրված ուսումնաարտադրական պրակտիկաները նախատեսված են անցկացնել ցիկլերով, հերթապահությունների ձևով:

Ամբողջ տեղեկատվությունը տես  
«ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ»-ում:

**ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԹՂԹԱՊԱՆԱԿ (ՊՈՐՏՖՈԼԻՈ)**

Պրակտիկայի թղթապանակը (պորտֆոլիոն) փաստաթուղթ է, որտեղ ուսանողները ներկայացնում են ողջ ուսումնառության ընթացքում պրակտիկաներից ձեռքբերված գիտելիքները, կարողությունները, հմտությունները, իրենց անհատական աշխատանքները: Այն տեղեկատվական կարևոր գործիք է պրակտիկայի արդյունավետությունը գնահատելու համար, քանի որ տալիս է ճշգրիտ պատկեր ուսանողի մասնագիտական-պրակտիկ աշխատանքների կատարման մասին:

Թղթապանակը հաճախ ծառայում է ուսանողների սեփական մասնագիտական աճը, ձեռքբերումները տեսանելի դարձնելու, վերլուծելու և գնահատելու համար □

Թղթապանակի առաջին մասը նախատեսված է «Իմ կրթության տեսլականը» ներկայացնելու համար, որտեղ ազատ շարադրանքով ուսանողները ներկայացնում են մասնագիտության ընտրության և պրակտիկայի ընթացքում կատարելագործվելու հնարավորությունների մասին իրենց մտորումները:

Պրակտիկայի թղթապանակի երկրորդ մասում տրվում է տեղեկություն պրակտիկայի անցկացման վայրի մասին, որը լրացվում է ուսանողի կողմից:

Թղթապանակը ներառում է նաև «Պրակտիկայի անհատական աշխատանքի օրագիրը»՝ տվյալ պրակտիկայի ծրագրով նախատեսված գործնական հմտությունների ձեռքբերման մակարդակների ամրագրմամբ:

Թղթապանակն ունի նաև պրակտիկայի ընթացքում իրականացրած հերթապահությունների, գրառումների, կարծիքների, մեկնաբանությունների և վերլուծությունների բաժիններ:

Ուսումնաարտադրական պրակտիկայի ավարտին թղթապանակում տրվում է պրակտիկանտի բնութագիրը և գնահատականը տվյալ պրակտիկայի ղեկավարի կողմից:

**ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

**ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**1. Համալսարանի սովորողն իրավունք ունի՝**

- ա) ստանալ մասնագիտական բազմակողմանի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխան գիտելիքներ,
- բ) ըստ նախասիրությունների՝ մասնակցել համալսարանում անցկացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին,
- գ) մասնակցել ուսուցման որակը հավաստող գործառույթներին և գնահատել պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը,
- դ) անվճար օգտվել համալսարանի գրադարանից, ինտերնետ սրահներից, լաբորատորիաններից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից, մարզական և առողջարանային հենակետերից, մասնակցել գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին, սեմինարներին և երիտասարդական համաժողովներին,
- ե) հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղել երկրորդ մասնագիտական ուսուցման հետ և ստանալ երկրորդ որակավորման աստիճան,
- զ) կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել համալսարանի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին,
- ը) ուսումնական տարվա ընթացքում ստանալ ամառային և ձմեռային արձակուրդ՝ 12 շաբաթ ընդհանուր տևողությամբ,
- է) ստանալ տեղեկատվություն հաշվարկված գնահատականի և հաշվարկի սկզբունքների վերաբերյալ,
- ը) ծանոթանալ համալսարանի կանոնադրությանը և իր իրավունքներին ու պարտականություններին վերաբերող այլ իրավական և ակադեմիական փաստաթղթերին, կնքել պայմանագիր համալսարանի հետ՝ ուսումնառության պայմանների վերաբերյալ,
  - սահմանված կարգով անհրաժեշտության դեպքում ստանալ ակադեմիական արձակուրդ /տարկետում/՝ մինչև մեկ տարի ժամկետով ( օրենքով սահմանված դեպքերի),
  - սեփական ցանկությամբ ընդմիջել ուսումը և գորակոչվել բանակ, իսկ գորացրվելուց հետո, մեկ ամսվա ընթացքում, վերականգնել ուսանողական իրավունքները,
  - Ուսումնական պլանները կատարած ուսանողներին շնորհվում է համապատասխան որակավորում և տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ՝ դիպլոմ:
  - Ավարտական վկայականում նշվում են ուսումնասիրված դասընթացները, ըստ ամրագրված ակադեմիական կրեդիտների և ակադեմիական առաջադիմության գնահատականների, մասնագիտությունը (մասնագիտացումները): Ուսման մեջ հատուկ հաջողություններ գրանցած ուսանողներին տրվում է գերազանցության դիպլոմ:

## **2. Համալսարանի սովորողը պարտավոր է՝**

- ա) պահպանել ներքին կարգապահական կանոնները,
- բ) բարձր պահել համալսարանի պատիվն ու հեղինակությունը,
- գ) հաճախել դասախոսություններին, գործնական, լաբորատոր պարապմունքներին և մասնակցել պրակտիկաներին,
- դ) սահմանված ժամկետում կատարել ուսումնական պլանով նախատեսված ծանրաբեռնվածությունը:
- ե) Հարգելի պատճառով դասերին չներկայանալու դեպքում՝ եռօրյա ժամկետում, այդ մասին տեղյակ պահել ֆակուլտետի դեկանին, իսկ Համալսարան ներկայանալու առաջին իսկ օրը ներկայացնել հիմնավորող փաստաթղթեր դասերին չմասնակցելու պատճառների մասին:
- զ) խնամքով վերաբերվել համալսարանի սեփականությանը (գույք, ուսումնական ձեռնարկներ, գրքեր, սարքավորումներ և այլն): Համալսարանի սեփականություն հանդիսացող գույքին պատճառած վնասի համար ուսանողը կրում է նյութական պատասխանատվություն:

## **✚ Ուսանողը համալսարանից ազատվում/հեռացվում է՝**

- ❖ իր դիմումի համաձայն,
  - ❖ այլ բուհ տեղափոխվելու դեպքում,
  - ❖ ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով՝ 12-ից ավելի կրեդիտ կազմող ակադեմիական պարտք ունենալու դեպքում,
  - ❖ համալսարանի կողմից սահմանված ժամկետում ուսման վարձը չվճարելու դեպքում:
- Արգելվում է ուսանողներին հեռացնել հիվանդության, արձակուրդների, ակադեմիական արձակուրդի կամ հղիության և ծննդաբերության արձակուրդի ընթացքում:

## **3. Ուսանողների ֆինանսական իրավունքները և պարտականությունները՝**

- ա) օգտվել ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից,
- բ) ուսանողի բարձր առաջադիմության և սոցիալական վիճակի արդյունքների հաշվառմամբ, համալսարանի միջոցների հաշվին ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում (զեղչ) տրամադրելու չափանիշներն ու կարգը սահմանվում են համալսարանի կողմից՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության,
- գ) սովորողները պարտավոր են վճարել համալսարանի կողմից սահմանված տարեկան ուսման վարձը՝ ըստ պայմանագրի: Ուսման վարձը ժամանակին չվճարելու դեպքում ուսանողը կարող է հեռացվել համալսարանից,
- զ) Ցածր առաջադիմության /12-ից ավելի կրեդիտ կազմող ակադեմիական պարտք/, դասընթացներից անհարգելի բացակայության, ուսումը կամավոր թողնելու, ուսման վարձը չվճարելու դեպքում ուսանողը հեռացվում/ազատվում է համալսարանից, անձնական գործը վերադարձվում է սովորած ժամանակահատվածի համար վերջնահաշվարկ կատարելուց հետո:
- է) Եթե ուսանողը հեռացվել/ազատվել է ուսման վարձը չմուծելու պատճառով, ապա վերականգնման ժամանակ պետք է վճարի նախկին պարտքը, ապա վերականգնվի համապատասխան կուրսում՝ վճարելով այդ կուրսի տարեկան վարձը:

- ժ) տարկետման պատճառով ուսումնական ընդհատելու և հետագայում սահմանված կարգով ուսանողական իրավունքները վերականգնելու դեպքում կնքվում է նոր պայմանագիր:
- ի) ուսման վարձը մուծվում է կանխիկ կամ փոխանցման կարգով՝ համալսարանին սպասարկող բանկում բացված հաշվեհամարին:

**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ  
ԴԵՊՔԵՐՈՒՄ**

- ✚ Այն ուսանողները, ովքեր չեն կատարում ուսումնական պլանները, ցուցաբերում են ակադեմիական անբավարար առաջադիմություն, խախտում են ՀՀ օրենսդրության, Համալսարանի ներքին իրավական ակտերի պահանջները, Համալսարանի ներքին կարգապահական կանոնները, ռեկտորատի որոշմամբ և ռեկտորի կամ նրա կողմից լիազորված անձի հրամանով կարող են ենթարկվել կարգապահական տույժերի՝ ընդհուպ մինչև Համալսարանից հեռացվելը (ազատվելը):
- ✚ **Ուսանողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝**
  - ա) դիտողություն,
  - բ) նկատողություն,
  - գ) խիստ նկատողություն,
  - դ) համալսարանից հեռացում (ազատում):
- ✚ Մինչև կարգապահական տույժի կիրառումը ուսանողից պետք է պահանջել խախտման վերաբերյալ գրավոր բացատրություն: Բացատրություն չունենալու դեպքում ուսանողը պետք է հրաժարվելու մասին ներկայացնի գրություն:
- ✚ Կարգապահական տույժը կարող է կիրառվել արարքի բացահայտումից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում՝ չհաշված ուսանողի հիվանդության կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածը:
- ✚ Եթե կարգապահական տույժի ենթարկվելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, ուսանողը չի ենթարկվել կարգապահական տույժի, ապա դա համարվում է չեղարկված:
- ✚ Ուսանողը կարող է հեռացվել (ազատվել) Համալսարանից ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և կանոնակարգերով նախատեսված դեպքերում:
- ✚ Առանց համալսարանի ղեկավարության թույլտվության, արգելվում է լաբորատորիաներից և ուսումնական շենքերից դուրս հանել տարբեր սարքավորումներ:
- ✚ Ուսանողները պետք է լինեն կարգապահ և մաքրասեր ինչպես ուսումնական հաստատությունում, այնպես էլ՝ վարձակալած կլինիկաներում:

Ամբողջ տեղեկատվությունը տե՛ս  
«ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ»-ում

**ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**

**ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ  
(ԶԵՂՉԵՐԻ) ՏՐԱՄԱԴՐՄԱՆ  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ**

- 1.1. Սույնով սահմանվում է «Ավանդական բժշկության համալսարանի» (այսուհետ՝ Համալսարան) ուսանողների խրախուսման գործընթացի կազմակերպման և Ուսանողների ուսման վճարի մասնակի փոխհատուցման (զեղչերի) տրամադրման կանոններն ու պայմանները:
- 1.2. Սույն կարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ ԿԳ նախարարի 23.08.2014թ-ի №815 Ա/Ք հրամանը, ՀՀ կառավարության 16.10.2014թ. №1126-Ն որոշումը, ԱԲՀ-ի կանոնադրությունը, սույն կանոնակարգը և կանոնակարգող ներքին իրավական այլ փաստաթղթեր:
- 1.3. Կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարվում է Համալսարանի գիտական խորհրդի կողմից:

**II. ՀԱՎԵԼՅԱԼ ՕԺԱՆԴԱԿՄԱՆ ԵՎ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ  
ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

- 2.1. Դեկանատի և Ուսանողական խորհրդի հիմնական գործառույթներից է ուսանողներին օժանդակումը և ուղղորդումը:
- 2.2. Դեկանատի կողմից ուսանողների օժանդակումը, աջակցումը և ուղղորդումը վերաբերում է կրթական գործընթացին և ուսանողական կյանքին:
- 2.3. Հավելյալ օժանդակման և խրախուսման մասին որոշումներ կայացնելու ժամանակ հաշվի են առնվում հետևյալ չափորոշիչները, եթե ուսանողը՝
  - 2.3.1. մասնակցել է ուսանողական տարբեր հասարակական միջոցառումներին,
  - 2.3.2. ցուցաբերում է ուսման բարձր առաջադիմություն,
  - 2.3.3. ընդգրկված է կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներին,
  - 2.3.4. մասնակցել է ամբիոնային ուսումնական գործընթացների բարելավմանը,
  - 2.3.5. ակտիվ մասնակցում է Համալսարանում կազմակերպվող գիտագործնական և հետազոտական աշխատանքներին,
  - 2.3.6. նախաձեռնում և մասնակցում է Համալսարանի հասարակական կյանքին և կազմակերպչական գործունեությանը:

### III . ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

- 3.1. Բոլոր ուսանողներին հնարավորություն է տրվում մասանակցելու համալսարանում կազմակերպվող տարբեր միջոցառումներին:
- 3.2. Հնարավորություն է ընձեռվում ընդգրկվելու կրթական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:
- 3.3. Ուսանողների կողմից իրականացվող ինքնակրթությունն ու գիտահետազոտական գործունեությունը գնահատվում և խրախուսվում է: Այդ նպատակով նրանց տրամադրվում է լաբորատորիաներ, ֆինանսական միջոցներ և այլ օժանդակ հնարավորություններ:
- 3.4. Համաձայն Համալսարանի ներքին կարգապահական կանոնների պահպանման, ուսանողի պարտականությունների բարեխիղճ կատարման, օրինակելի վարքի դրսևորման, ուսման մեջ բարձր առաջադիմություն ցուցաբերելու, ուսանողական տարբեր գիտական կոնֆերանսներին մասնակցության և այլ ուսանողական ձեռքբերումների համար ուսանողը կարող է խրախուսվել հետևյալ կարգով`
  - 3.4.1. շնորհակալագրի տրամադրում, կցված անձնական գործերին,
  - 3.4.2. միանվագ դրամական կամ հուշանվերներով պարգևատրում:

### IV. ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ (ԶԵՂՉԵՐԻ) ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 4.1 Ուսանողական նպաստը մասնակի փոխհատուցում է ուսանողի ուսման վարձավճարը ԱԲՀ ֆինանսական միջոցների հաշվին:
- 4.2 Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տրամադրվում է`
  - 4.2.1. 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին,
  - 4.2.2. զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին,
  - 4.2.3. պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին,
  - 4.2.4. միևնույն ընտանիքից համալսարանում սովորող երկու և ավելի ուսանողներին,
  - 4.2.5. 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամ կամ անաշխատունակ ծնողներ ունեցող ուսանողներին,
  - 4.2.6. համալսարանում 7 և ավելի տարի աշխատանքային պայմանագրով անընդմեջ աշխատող աշխատակիցների երեխաներին,
  - 4.2.7. առանձնահատուկ և սույն կանոնակարգով չնախատեսված դեպքերում ռեկտորի որոշմամբ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին` ՄՈԳ-ի 95 տոկոս շեմը հաղթահարած ուսանողներին:

**ԿԱՐԳ**  
**ԱՎԱՆՂԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**  
**ՈւՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ /ԱԶԱՏՄԱՆ/ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով կարգավորվում են ԱԲՀ-ի ուսանողների հեռացման (ազատման) և ուսանողական իրավունքների վերականգնման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Կրթության և գիտության նախարարի 17.11.2011թ-ի N 1242-Ն և 17.12.2018թ. N 1676-Ն հրամանները, ԱԲՀ-ում գործող «ԱԲՀ ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգը» և կանոնակարգող այլ փաստաթղթեր:  
Սույն կարգում օգտագործվող հասկացություններն են՝
  - 1) ակադեմիական պարտք՝ կիսամյակի քննաշրջանի արդյունքներով, ներառյալ երկու վերահանձնման փուլերը, տվյալ առարկայական դասընթացի համար սահմանված կրեդիտ չհավաքելը,
  - 2) ակադեմիական անբավարար առաջադիմություն՝ քննաշրջանի արդյունքներով անհրաժեշտ կրեդիտները չհավաքելը,
  - 3) առարկայական (ծրագրային) տարբերություն՝ ուսանողի ուսումնառած ուսումնական պլանում չընդգրկված առարկան կամ որևէ առարկայից կրեդիտների մեկ երրորդից ավելի տարբերությունը,
  - 4) ուսումնառության ընդհատում՝ սույն կարգով սահմանված հիմքերով Համալսարանից ուսանողի հեռացում կամ ազատում, կամ ուսումնառության դադարեցում:

**II. ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ**

3. Համալսարանից ուսանողը հեռացվում է՝
  - 1) ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով, բացառությամբ սույն կարգի 11-րդ կետով նախատեսված դեպքերի,
    - ❖ ակադեմիական անբավարար առաջադիմություն է համարվում՝
      - կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփելուց հետո /ներառյալ տվյալ քննաշրջանի երկու վերահանձնումները/ 12-ից ավել կրեդիտ կազմող ակադեմիական պարտքը.
      - ևս 2 անգամ վերահանձնումներից հետո մնացած ակադեմիական պարտքը:
  - 2) ՀՀ օրենսդրությամբ կամ Համալսարանի կանոնադրությամբ, կամ ներքին կարգապահական կանոններով, կամ Համալսարանի և ուսանողի միջև կնքված ուսումնառության պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում,
  - 3) Համալսարանի կողմից սահմանված ժամկետում ուսման վարձավճարը չվճարելու դեպքում:
4. Համալսարանից ուսանողը ազատվում է՝



- 1) իր դիմումի համաձայն,
  - 2) այլ հաստատություն տեղափոխվելու դեպքում:
5. Համալսարանից ուսանողի ազատման մասին հրաման իր դիմումի համաձայն չի կարող տրվել, եթե նա ենթակա է հեռացման՝ համաձայն սույն կարգի 3-րդ կետով նախատեսված դեպքերի:
6. Ուսանողի ուսումնառությունը դադարեցվում է՝
- 1) պարտադիր ժամկետային զինվորական ծառայության գորակոչվելու դեպքում,
  - 2) հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքերում,
  - 3) առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդ ձևակերպելու դեպքում,
  - 4) սոցիալական անապահով վիճակում գտնվելու պատճառով վճարունակ չլինելու դեպքում:
7. Հեռացված կամ ազատված արական սեռի ուսանողների վերաբերյալ հրամանները 3 աշխատանքային օրվա ընթացքում Համալսարանի կողմից ներկայացվում են համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատներ:
8. Քննություններին չներկայացած կամ ակադեմիական անբավարար առաջադիմություն ունեցող ուսանողների ակադեմիական պարտքերի անվճար հիմունքներով մարումն իրականացվում է Համալսարանի կողմից սահմանված կարգով: Ակադեմիական պարտքերի մարման վերջնաժամկետ է սահմանվում մինչև ընթացիկ կիսամյակի երրորդ շաբաթվա ավարտը:
9. Սույն կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում Համալսարանից ուսանողի հեռացման հրամանը տրվում է կիսամյակի քննաշրջանի ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքների ամփոփումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, որի մասին ուսանողը նախապես գրավոր տեղեկացվում է:
10. Ուսանողի հեռացման կամ ազատման դեպքում, 5 աշխատանքային օրվա ընթացքում, ըստ պահանջի, Համալսարանի կողմից սահմանված կարգով նրան տրամադրվում են համապատասխան հրամանի պատճենը, ակադեմիական տեղեկանքը և միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթության ավարտական փաստաթուղթը: Համալսարանի կողմից ավարտական փաստաթղթի պատճենը պահվում է ուսանողի անձնական գործում:
11. Ընթացիկ ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերած /փորձաշրջանի կարգավիճակում գտնվող/ ուսանողներն առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերն իրավունք ունեն վերահանձնելու ևս երկու անգամ՝ անմիջապես հաջորդ կիսամյակի քննաշրջանի լուծարքի երկու փուլերի ընթացքում:
- Ուսանողն իրավունք ունի վերահանձնելու դասընթացի ակադեմիական պարտքը՝ առավելագույնը երկու անգամ:

### III. ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄԸ

12. Ուսանողական իրավունքների վերականգնումը թույլատրվում է սկսած առաջին կուրսի երկրորդ կիսամյակից, տվյալ մասնագիտության (կրթական ծրագրի) համար լիցենզիայով սահմանված տեղերի շրջանակում, բացառությամբ սույն կարգի 6-րդ կետով սահմանված դեպքերում ուսումնառությունը դադարեցրած ուսանողների, որոնք վերականգնում են իրենց ուսանողական իրավունքներն այն պահից, երբ ընդհատել են, անկախ լիցենզիայով սահմանված տեղերի քանակից: Սույն կարգի II կետի 3-րդ և 4-րդ ենթակետերին համապատասխան Համալսարանից հեռացված կամ ազատված ուսանողի ուսանողական իրավունքները վերականգնվում են ուսումնառությունն ընդհատելուց առնվազն մեկ կիսամյակ հետո:
13. Սույն կարգի 6-րդ կետի նշված դեպքերում ուսումնառությունը դադարեցրած ուսանողները վերականգնվում են մինչև ուսումնառության դադարեցումն ունեցած կարգավիճակի պահպանմամբ:
14. Չի թույլատրվում հավատարմագրում չունեցող հաստատությունների (մասնագիտությունների) նախկին ուսանողի ուսանողական իրավունքները վերականգնել հավատարմագրում ունեցող հաստատություններում (մասնագիտություններում):
15. Ուսանողական իրավունքները վերականգնելու վերաբերյալ դիմումները ներկայացվում են ընդունող հաստատության ռեկտորին՝ կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող 2 շաբաթների ընթացքում:
16. Վերականգնման պահին միայն տվյալ կիսամյակի ակադեմիական պարտքեր ունենալու դեպքում ուսանողական իրավունքները վերականգնելու վերաբերյալ դրական որոշում կայացնելիս հաստատության կողմից տրվում է վերականգնման հրաման:
17. Առարկայական տարբերությունների կամ նախկին կիսամյակներից ակադեմիական պարտքերի առկայության դեպքում ուսանողական իրավունքները վերականգնելու վերաբերյալ դրական որոշում կայացնելիս Համալսարանի կողմից տրվում է կցագրման հրաման: Համալսարանի կողմից սահմանված կարգով, մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը, առարկայական տարբերությունները հանձնելուց (առավելագույնը մեկ վերահանձնման հնարավորությամբ) հետո սովորողը հրամանագրվում է Համալսարանում:
18. Ակադեմիական պարտքերի մարումն իրականացվում է ուսումնական պլանով նախատեսված քննաշրջանի ժամանակահատվածում՝ ներառյալ երկու վերահանձնման փուլերը:
19. Ուսանողական իրավունքները վերականգնող ուսանողի հրամանագրումը կատարվում է միայն անհրաժեշտ վճարումները կատարելուց հետո Համալսարանի կողմից սահմանված կարգով և ժամկետներում: Ուսանողն ազատվում է նախկինում կրեդիտներ հավաքած առարկաների ուսումնական պարապմունքներից և ատեստավորումից:

20. Ուսանողը վերականգնվում է այն կիսամյակում, որից ուսումնառությունն ընդհատվել է, եթե վերականգնման պահին վերահանձնման ենթակա առարկայական տարբերությունները և ակադեմիական պարտքերը չեն գերազանցում 20 կրեդիտը, բացառությամբ սույն կարգի 6-րդ կետով սահմանված դեպքերի: Հակառակ դեպքում ուսանողին առաջարկվում է իր ուսանողական իրավունքները վերականգնել ավելի ցածր այն կիսամյակից, որից ուսումնառության շարունակման դեպքում առարկայական տարբերությունների սույն կետում նշված պահանջը բավարարվում է:
21. Սույն կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն ուսումնառությունը դադարեցրած ուսանողը վերականգնվում է ուսումնառության դադարեցման պահից, եթե ուսանողն իր իրավունքները վերականգնելու վերաբերյալ դիմումը ներկայացրել է ուսումնառության դադարեցման պատճառը վերանալու օրվանից հետո ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում ձևառային գորակոչի դեպքում և երեք ամսվա ընթացքում ամառային գորակոչի դեպքում՝ անկախ տվյալ մասնագիտության (կրթական ծրագրի) համար լիցենզիայով սահմանված տեղերի քանակից, առաջացած առարկայական տարբերություններից ու ակադեմիական պարտքերից: Նշված ժամանակահատվածի ընթացքում վերականգնման դիմում չներկայացնելու դեպքում ուսանողը հեռացվում է Համալսարանից:
22. Սույն կարգի 6-րդ կետի համաձայն ուսումնառությունը դադարեցրած ուսանողը վերականգնման պահին նախկին մասնագիտությամբ (կրթական ծրագրի) համապատասխան կուրսի բացակայության դեպքում՝ հաստատության առաջարկությամբ և ուսանողի համաձայնությամբ, կարող է վերականգնվել հարակից մասնագիտությամբ (կրթական ծրագրով), իսկ վերջինիս բացակայության պարագայում՝ այլ մասնագիտությամբ (կրթական ծրագրով)՝ անկախ տվյալ մասնագիտության (կրթական ծրագրի) համար լիցենզիայով սահմանված տեղերի քանակից, առաջացած առարկայական տարբերություններից ու ակադեմիական պարտքերից:
23. Վերականգնված ուսանողի դիմումը, ակադեմիական տեղեկանքը, վերականգնման մասին հրամանի պատճենը, հաստատության հետ կնքած պայմանագիրը, միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթության ավարտական փաստաթուղթը և ուսման վարձավճարի վճարման անդորրագրի պատճենը պահվում են նրա անձնական գործում:

**ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**  
**ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ**  
**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ**

- 1.1. Սույն կանոնակարգը սահմանում է Ավանդական բժշկության համալսարանի (այսուհետ՝ Համալսարան կամ ԱԲՀ) ակադեմիական ազնվության դրույթները, սկզբունքներն ու չափանիշները, ակադեմիական անազնվության դրսևորումները և դրանց կանխարգելման միջոցները, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ուսանողների և նրանց ծնողների դերն ակադեմիական ազնվության ապահովման գործում:
- 1.2. Սույն Կանոնակարգն ընդունվել է Համալսարանի կողմից ակադեմիական ազնվությունը խթանելու նպատակով: Այն մշակված է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության հիմնադրման մասին կոնվեցիայի 2-րդ հոդվածի (14.07.1967թ.), Մտավոր սեփականության բնագավառում իրավախախտումները կանխելու նպատակով համագործակցության մասին համաձայնագրի (20.07.1999թ.), ՀՀ Սահմանադրության, Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին օրենքի (15.06.2006), Տեղեկատվության ազատության մասին օրենքի (23.09.2003), ԱԲՀ-ի ռազմավարական զարգացման ծրագրի և ներքին կարգապահական կանոնների հիման վրա:
- 1.3. Համալսարանի ուսանողները, պրոֆեսորադասախոսական, օժանդակ և վարչական կազմը, ինչպես նաև արտաքին շահակիցները պետք է տեղեկացված լինեն սույն Կանոնակարգին, որը զետեղված պետք է լինի Համալսարանի [www.utm.am](http://www.utm.am) պաշտոնական կայքում:

**2. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ**

- 2.1. **Ակադեմիական աշխատանք.** Համալսարանի կրթական ծրագրերի և դասընթացների հետ կապված ցանկացած գործողություն, որը ներառում է քննությունները, ստուգարքները, հաշվետվությունները, ինքնուրույն, անհատական, լաբորատոր աշխատանքները, գիտական հետազոտությունները և փորձերը, գիտական հոդվածները: Այն կարող է լինել գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային:
- 2.2. **Ակադեմիական ազնվություն** է համարվում՝
  - 2.2.1. ակադեմիական աշխատանքներն առանց այլ անձանցից արգելված օգնություն ստանալու, առանց գրագողության, գողության, խաբեության, կեղծիքի, ստելու, խարդախության կատարելը,
  - 2.2.2. գիտելիքների ստուգման (քննություն, ստուգարք, անհատական աշխատանք) ընթացքում ազնիվ և պատշաճ պահվածք պահպանելը,
  - 2.2.3. տեղեկատվության ցանկացած արգելված աղբյուրից չօգտվելը,
  - 2.2.4. գիտական և գիտահետազոտական աշխատանքներում մտքերի, գաղափարների իրական հեղինակներին հղումներ տալը:
- 2.3. **Ակադեմիական ազնվությունը նպատակաուղղված է՝**
  - կրթության որակի և դասավանդման արդյունավետության բարձրացմանը,
  - ազնվության և անաչառության մթնոլորտ ստեղծելուն,

- բացառելու ցանկացած անազնիվ վարքագիծ,
- ձևավորելու սկզբունքային, մտածող, հետազոտող, բանիմաց անհատներ, որոնք կարողանում են համարձակ արտահայտել իրենց մտքերը, հարգանքով են վերաբերում այլ մարդկանց և նրանց ստեղծած արժեքներին,
- ակադեմիական անազնվության դրսևորումների կանխարգելմանը և դրանց հետ կապված խնդիրների կանոնակարգմանը,
- Համալսարանի առաքելության և ռազմավարական նպատակների արդյունավետ իրականացմանը,
- որակյալ կրթական միջավայրի ձևավորմանն ու որակյալ ծառայությունների տրամադրմանը:

### **3. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՆԱԶՆՎՈՒԹՅԱՆԸ ԲՆՈՐՈՇ ՀԻՄՆԱԿԱՆ ՎԱՐՔԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

**Արգելված վարքագիծ.** ուսանողը *գիտակցաբար* չպետք է կատարի կամ փորձի աջակցել այլ ուսանողի կատարել անազնիվ ցանկացած գործողություն՝ կապված ակադեմիական աշխատանքի հետ, որը պետք է ներկայացնել ակադեմիական կրեդիտ ստանալու կամ առաջադիմության բարձրացման համար: «Գիտակցաբար» տերմինը նշանակում է, որ ուսանողը տեղյակ է, որ տվյալ ակադեմիական աշխատանքը ներկայացվելու է ակադեմիական առաջադիմության համար:

**Գրագողություն.** ակադեմիական առաջադիմության համար կատարված աշխատանքի մեջ առանց համապատասխան աղբյուրի վկայակոչման բառեր, տերմիններ, գաղափարներ, կարծիքներ կամ տեսություններ ընդգրկելը, որոնք հեղինակային չեն: Գրագողությունը ընդգրկում է (սակայն չի սահմանափակվում) հետևյալ գործողությունները.

- 1) առանց չակերտների մեջբերել այլ անձին պատկանող գրավոր կամ բանավոր խոսքերն ամբողջությամբ կամ մասամբ,
- 2) առանց նշումների կամ մեջբերումների վերապատմել այլ անձին պատկանող գրավոր կամ բանավոր խոսքը,
- 3) ներկայացնել այլ անձին պատկանող գաղափարը, տեսությունը կամ բանաձևը՝ որպես հեղինակային բնագիր աշխատանք,
- 4) գնել (կամ այլ կերպով ձեռքբերել) այլ անձի կողմից կատարած աշխատանք կամ այլ առաջադրանք և ներկայացնել որպես ուսանողի ինքնուրույն աշխատանք,
- 5) տալ սխալ հղումներ, երբ ուսանողն իր աշխատանքում «Օգտագործված աղբյուրներ»-ի ցանկում ներառում է գրականություն, որին ինքն անձամբ չի ծանոթացել և աշխատանքում դրան հղում չի արվել:

**Արգելված աջակցություն.** դասախոսի կողմից արգելված աջակցություն տրամադրել կամ ստանալ ցանկացած ակադեմիական աշխատանքի վերաբերյալ: Քննությունների, ստուգարքների, լաբորատոր աշխատանքների և նմանատիպ գործողությունների ժամանակ ուսանողները պետք է տեղյակ լինեն, որ ցանկացած աջակցություն (ինչպիսիք են գրքեր, գրառումներ, հաշվիչներ և այլ անձանց հետ խոսակցություններ) արգելված է՝

բացառությամբ այն դեպքերի, երբ այն հաստուկ թույլատրված է դասախոսի կողմից: Արգելված վարքի օրինակները ընդգրկում են, սակայն չեն սահմանափակվում.

- 1) արտագրել կամ թույլատրել այլ անձանց արտագրել քննությունների պատասխանները,
- 2) քննության ժամանակ փոխանցել կամ ստանալ տեղեկություններ, որոնք վերաբերում են քննվող նյութերին (այդ թվում՝ փոխանցումը կարող է կատարվել բանավոր, գրավոր, նշանների կամ էլեկտրոնային ազդանշանների օգնությամբ կամ այլ կերպ),
- 3) տալ կամ ստանալ ավելի ուշ ժամկետի համար նշանակված քննությունների պատասխանները,
- 4) այլ անձի փոխարեն լրացնել կամ թույլատրել այլ անձին ուսանողի փոխարեն լրացնել ամբողջ առաջադրանքը կամ դրա մեկ մասը (ինչպիսիք են աշխատանքը, վարժությունը, տնային առաջադրանքը, ներկայացումը, հաշվետվությունը, համակարգչային կիրառումը, լաբորատոր փորձը կամ հաշվարկը),
- 5) կիրառել արգելված ծրագրավորող հաշվիչ կամ այլ էլեկտրոնային սարքեր և այլն:

**Ստել, կեղծել կամ կաշառել.** այն ընդգրկում է, սակայն չի սահմանափակվում.

- 1) Ակադեմիական աշխատանքի անբավարար կատարման կամ չկատարման դեպքում կեղծ պատճառաբանություններ (նախօրոք կամ փաստից հետո):
- 2) Կեղծել ցանկացած լաբորատոր կամ փորձարարական աշխատանքի արդյունքները կամ ցանկացած տվյալներ և տեղեկություններ:
- 3) Փոփոխել ցանկացած ակադեմիական աշխատանք այն ներկայացնելուց հետո, բացառությամբ այն դեպքերի, եթե նման փոփոխությունները մտնում են առաջադրանքի պահանջների մեջ (ինչպիսիք են՝ դասախոսի գիտությամբ վերանայել տվյալ ակադեմիական աշխատանքը):
- 4) Վնասել համակարգչային սարքավորումները կամ լաբորատոր սարքավորումները ակադեմիական աշխատանքի գնահատումը փոփոխելու կամ կանխելու համար, օգտվել այլ անձին պատկանող համակարգչային գաղտնաբառից, վնասել կամ քայքայել ինտերնետային կայքի բովանդակությունը կամ մատչելիությունը կամ գործել այլ անձի փոխարեն՝ համակարգչային ռեսուրսներ ձեռքբերելու նպատակով:
- 5) Գնահատականների կամ պատասխանների կեղծում՝ այլ գնահատական ստանալու նպատակով:
- 6) Ակադեմիական առաջադիմության համար ներկայացնել աշխատանք, որն արդեն նախապես ներկայացվել է (նույնիսկ նույն ուսանողի կողմից), բացառությամբ այն դեպքերի, երբ այն ներկայացվել է աշխատանքը հսկող դասախոսի գիտությամբ կամ լրացնում է նախկինում կատարված աշխատանքը:

**Գողություն.** գողանալ, վերցնել կամ մեկ այլ արգելված կերպով ձեռքբերել ակադեմիական ցանկացած աշխատանքի վերաբերյալ տեղեկություններ կամ նյութեր (ինչպիսիք են՝ գնահատականների գրանցումները, գրքերը, աշխատանքները, համակարգչային սարքավորումները և տվյալները, լաբորատոր նյութերը և այլն):

### **Համաձայնություն.**

- 1) աշխատանքի անբարեխիղճ կատարմանն աջակցելը,
- 2) թեստային աշխատանքի, քննության կամ այլ տիպի աշխատանքների (ակնարկ, ռեֆերատ, էսսե, լաբորատոր աշխատանք և այլն) ուրիշի փոխարեն կատարումը կամ ուրիշի աշխատանքի հանձնումը սեփականի փոխարեն,
- 3) գնահատական ստանալու շուրջ համաձայնությունը ուսանողի և դասախոսի միջև,
- 4) գնահատական ստանալու նպատակով դասախոսին միջնորդելը (օրինակ դասախոսի, կոլեգայի միջոցով):

### **Բազմապատճենում.**

- 1) Նույն աշխատանքը տարբեր վերնագրերով ներկայացնելը՝ որպես տարբեր առաջադրանք:
- 2) Միևնույն աշխատանքը տարբեր տիպի գնահատումների համար ներկայացնելը, այդ թվում՝ որևէ աշխատանքի, որը երբևէ արդեն գնահատված կամ ներկայացված է եղել, մասնակի կամ ամբողջական կրկնությունը՝ նույնիսկ եթե այն հենց հեղինակին է և գրագողություն չի ենթադրում:

Ցանկացած այլ գործողություն, որն անարդար ձևով առավելություն է տալիս աշխատակցին կամ ուսանողին և ազդում նրա արձանագրած արդյունքների վրա: Ակադեմիական անազնվություն համարվող ցանկացած այլ վարք արգելվում է, նույնիսկ՝ եթե այն հատուկ կերպով նշված չէ վերոնշյալ օրինակների ցուցակում:

### **3.1. Պահանջվող վարքագիծ**

Համաձայն սույն Կանոնակարգի՝ Համալսարանի պրոֆեսորադասախոսական, օժանդակ և այլ սպասարկող բաժնի, ուսանողական կազմի ցանկացած անդամ սույն քաղաքականության խախտումների մասին տեղեկացված լինելու դեպքում պարտավոր է տեղյակ պահել Համալսարանի ղեկավարությանը խախտումների վերաբերյալ: Պահանջվող վարքը ընդգրկում է (սակայն չի սահմանափակվում) խախտում կատարած ուսանողի հետ քննարկումներ վարելը, հարցերին ճիշտ պատասխաններ տալը և ակադեմիական ազնվության հարցերով զբաղվող հանձնաժողովին փաստաթղթեր տրամադրելը:

- **Պրոֆեսորադասախոսական կազմը** պարտավորություն է ստանձնում միջոցներ ձեռնարկել և տեղեկացնել ուսանողներին ակադեմիական ազնվության կանոնների խախտման վերաբերյալ, որոնք վերաբերում են ակադեմիական աշխատանքին և ակադեմիական աջակցությանը:

Յուրաքանչյուր դասախոս պետք է սատարի ակադեմիական ազնվության մթնոլորտը: Դասախոսի կողմից սույն պարտավորությունները չկատարելը չի կարող արդարացում համարվել ուսանողի դեմ ուղղված ակադեմիական անազնվության մեղադրանքին:

- **Ուսանողներ.** յուրաքանչյուր ուսանող պարտավոր է տեղեկանալ սույն փաստաթղթի պայմաններին: Ուսանողը չի ազատվում պատասխանատվությունից պայմաններին տեղյակ չլինելու դեպքում:

#### **4. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

##### **4.1. Համալսարանի դերն ակադեմիական ազնվությունն ապահովելու գործում**

- Ապահովել վերոնշյալ փաստաթղթի հասանելիությունը ներքին և արտաքին շահակիցներին:
- Պարբերաբար կազմակերպել սեմինարներ և քննարկումներ Համալսարանի շահակիցների (ուսանողներ, դասախոսներ, ծնողներ և այլն) հետ՝ ակադեմիական ազնվության վերաբերյալ:
- Ստեղծել ակադեմիական ազնվության պահպանմանը նպաստող մթնոլորտ:
- Յուրաքանչյուր քննական շրջանից առաջ ուսանողներին և դասախոսներին տեղեկացնել թույլատրելի պարագաների ցանկի մասին (պաստառներ, աղյուսակներ, գծապատկերներ և այլ ձևերով):
- Կարևորել դեկանատի, ամբիոնների, ուսումնական մասի, ՈւԳԸ-ի, ուսխորհրդի և գրադարանի դերն ակադեմիական ազնվության ձևավորման գործընթացում:

##### **4.2. Դասախոսի դերն ակադեմիական ազնվությունն ապահովելու գործում**

- Սովորողների մոտ կարևորել խնդիրները ինքնուրույնաբար լուծելու, հետազոտություններ անելու և տեղեկատվական գրագիտության հմտություններ ձեռք բերելու պատասխանատվությունը:
- Սեփական օրինակով ձևավորել և զարգացնել ակադեմիական ազնվության կանոնները պահպանելու և դրանց հետևելու կարողություններ:
- Ուսումնասիրել հեղինակային իրավունքին առնչվող հարցերը, սովորեցնել ուսանողներին կատարել ճշգրիտ հղումներ, ինքնուրույնաբար, սեփական բառերով ձևակերպել և արտահայտել իր և այլ մարդկանց մտքերն ու գաղափարները:
- Յուրաքանչյուր գնահատվող առաջադրանքից առաջ ուսանողներին ներկայացնել թույլատրելի էլեկտրոնային սարքավորումների, բանաձևերի և գրքերի ցանկը:
- Մասնակցել ակադեմիական ազնվության վերաբերյալ քննարկումներին, դասընթացներին և այլն:

##### **4.3. Ուսանողի դերն ակադեմիական ազնվությունն ապահովելու գործում**

- Գիտենալ ակադեմիական ազնվության կանոնակարգի դրույթները:
- Հարգել և պահպանել այլ մարդկանց մտավոր սեփականությանն առնչվող հիմնարար պահանջները:
- Ցանկացած աշխատանք կատարելիս ընդունել և խստորեն հետևել էթիկական չափանիշներին:
- Մեջբերումներ անելուց հետո ձևակերպել եզրակացություններ, որոնք բացառապես սեփական մտքի արդյունքն են:
- Աշխատանքի վերջում պարտադիր ունենալ մատենագրություն, որտեղ նշված լինեն բոլոր տեղեկատվական աղբյուրները:
- Յուրաքանչյուր քննությունից առաջ տեղեկանալ տպագիր և էլեկտրոնային գրականության, սարքավորումների, գծապատկերների, աղյուսակների թույլատրելի ցանկին:
- Ուսանողական խորհրդի կազմում մասնակցել ակադեմիական ազնվության փաստաթղթի վերանայման գործընթացին:



## **5. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՆԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՈՒՄ**

- 5.1. ԱԲՀ-ի ֆակուլտետների դեկանները յուրաքանչյուր նոր աշխատակցի կամ ուսանողի ծանոթացնում են սույն կանոնակարգի հետ, ներկայացնում են ակադեմիական ազնվության չափանիշները և դրանց խախտման հետևանքները, զգուշացնում, որ ակադեմիական անազնվությունն դրսևորելը պատժելի է:
- 5.2. Յուրաքանչյուր նոր աշխատակից կամ ուսանող ԱԲՀ-ում ակադեմիական ազնվության շուրջ մանրամասն տեղեկատվություն և/կամ խորհրդատվություն ստանալու համար կարող է դիմել ԱԲՀ պրոռեկտորին և Ուսանողական խորհրդի նախագահին:
- 5.3. Պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչների կամ Համալսարանի այլ աշխատակիցների, ինչպես նաև սովորողների կողմից ակադեմիական ազնվության սկզբունքների խախտման կամ անազնվության դրսևորման դեպքերը քննարկվում են Համալսարանի էթիկայի հանձնաժողովում՝ հարցերի քննարկման ընթացակարգով: Շահագրգիռ անձը գրավոր դիմում է տալիս ՄՌԿ և ընդհանուր բաժին, որն էլ հարցը ներկայացնում է էթիկայի հանձնաժողովի քննարկմանը:

## **6. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ**

- 6.3. Սույն կանոնակարգը հաստատում է ԱԲՀ-ի գիտական խորհուրդը:
- 6.4. Կանոնակարգում փոփոխություններ ու լրացումներ կարող են կատարվել ԱԲՀ-ի գիտական խորհրդի որոշմամբ՝
- ռեկտորի,
  - գիտական խորհրդի անդամների,
  - ուսանողական խորհրդի,
  - որակի ապահովման հանձնաժողովի առաջարկությամբ: